ԱՐԵՒԵԼԵԱՆ

ՄԱՄՈՒԼ

ԳԱՆԶԱՍՏԱՆ ԱՄՍԵԱՑ

ԺԸ· ՏԱՐԻ 1888 ՕԳՈՍՏՈՍ

ԲԵՐՈՒԶԱԿ՝

(ՓԻՐՈՒԶԻ)

Ա.

Ա՛յս վերջին տարիներս՝ մայիսի չքնաղ երեկոյ մ՛էր, երբ բացօթեայ սեղանի մը չուրջը նստած էին մի չատ կոչնականներ։ Սեղանը զրուած էր այն պուրակներուն միջն մէջ՝ որ կը բոլորեն Կոպենհագէնա Հիւսիսի բարձրաւանդակը։ Պուրակներուն ատորև կ՛տարածուէր Բրաղէր, ուր սարսուռն ոգևորութիւն կ՛տիրէր ու չարժուէր, մինչ յամրաքայլ գրոհն վէտ ի վէտ կը տատանէր և իւր չիմի չշունչներ ու աղմուկներ գուարթապին

* Օգ.ին վէպն աւարտած լինելով, խմբագրութիւնս արժան համարեց Պ. Շ. Գոլիչեի այս Ընտրվ. անուն վէպը թարգմանել ազատօրէն, տեղ տեղ զանց ընելով կամ համառօտելով այն մասերն որ աւելի տեղական գոյն կամ յարաբերութիւն ունին բուն վէպին հիւսուածքին հետ։ Խմբագրութիւնս յարմար դատեց նաև վէպին Թ-ւ-ոջ ֆրանսերէն անուն թարգմանել Ընտրվ. (փերոզ արդէն ծանօթ պարսկերէն բառն հայացնե-

նուագ մը կ'յորինէին մահամուտ։ Վիշնասցիք, որոց առօրեան աշխատանքը կանուխ կ'լրանայ, արդէն խաւժեր էին իրենց փրկան ճեմավայրն և կ'խանէին Հօքդ–Ալէի քառաչար ծառերուատակ, ուր առաւօտին մի քանի յետնորդ կառքեր կ'սիրտնային ուղիները։

Հին «ան Տեր Մայոբերի վիճնական զօրագնդին երաժշտականխումբը մօտաւոր սրճարանէն կ'ուղարկէր՝ հնչական դրքնդիւններով, այլ և այլ թատերաչին, մարտական և չրխկտրիկեղանակներու գաշնաձայն բնկորներ։ Իսկ դադարման միջոցներուն՝ կ'հասնէին ի հեռուստա, մեղմիկ ու ակար, երգեհոնիկներու մրմունջներ և չնփորներու պղնձազօդ պոյմումները, ձայնակցելով փայտաչէն մեհանի արբաւին կամ Ռոքեբ–Բրոքերի ձեռնածուներու ցոյցին։ Հնօրեայ անօթներ՝ որ Աստրիոյ մայրաքաղքին հասարակաչին ճամբաներն ոտոդելու կ'զրնծաճուին, այս է՝ խոշոր տակառներ կանգնայ խոզովակով, որու ծայրը կըգտնուի գնդաձև ցնցուղ մը, և որու՝ մարդ մը, չուանի մը միջոցաւ, հորիզոնական չարժում մը կ'տայ, վաղուց աւարտած էին իրենց գործը։ Աստի անթիւ քայլորդներու ոտիցը կոխան եղողչոր հողէն վեր կ'ելնէր նուրբ փոշի մ'և օդին մէջ կ'սաւառնէր ակնհչոյլ փայլերով արեւէն, որ մարը կ'մռնէր քաղքին կողմի՝ կարմրագոյն և բոցավառ երկնից երեսը։

Կառատնդ ինձ հասկլլի կոչնականներն լեզու թափելով կ'նայէին նաև ուշադիր այդ ընտանի հորիզոնին։ Հայկերոյթին աւարտելու մօտ էր։ Բազմազոյն հնպուլներով ճածկուած կանթեղները բերած էին սպասաւորները, որպէս զի ցրուեն խաւարն որ արդէն սկսած էր պատել չորս դին, և գլանիկները կըվառուէին։ Ժամն էր՝ ընտանեբար լեզու կորել և մտերմօրէն սիրտ բանալ, ինչպէս միշտ կ'պատահի՝ երբ մարդիկ փափուկ հայկերոյթէ մ'առաջ կ'պղտան ներքին բարօրութիւն և անհոգութիւն։ Այս կոչունքը պատրաստուած էր ի պատիւ Շեռնտորֆ կոմսին, մեծազարմ ազատանի մը, արժանաւոր ղեւանդէտ

լով) փոխանակ Պէյոլի, զոր Ներպրեան բառարանն առաւ ձարձաբար կըգործածէ, և Հոմ խորհ և տարիմաստ բառին տեղ զոր Լմինեանի բառարերքը կ'ցուցնէ։

Խմբագրութիւնս անկասկած է որ առ. հասարակ Աբգդ ընթերցողներն մտադիր հետաքրքրութեամբ պիտի կարդան վէպ մ'որ ոչ միայն արտաշարժ և եղերական դէպքեր կ'պարունակէ, այլ հրահանգիչ է և բարոյալի։

Ծ. Խ.

մը, որ նոյն պահուն անպաշտօն էր, նաև արուեստագէտ՝ երբ առիթը պատահէր։ Ձմեռուան սկիզբն առնուցած էր նա վիճենալի առնչութիւն մը հաստատել* միոյն հետ և հարստանալ իրիկունն իսկ ուղի ընկած էր նոր հարսին հետ դէպ ի Դրիէստ և Վիեննոյի ի հետամ մի քանի շաբաթ մնալու և գալնօքի կոմսին կողմէ իրեն յանձնուած մի փոխուկ պաշտօնը կիրնալի մտա յաջողութեամբ ի կատար հաներ էր, կ'ըսէին։ Անոնք նոր հարսն ու փեսան Իտալիոյ մէջ և այլ քաղաքներ պտոյտ ըրեր և հինգ ամիս տարակայ մնալէն ետև՝ նոր հատած էին ի Վիէննա։

Ահա այս վերադարձը շնորհաւորելու մտօք՝ կոմսին բարեկամները հաւաքուեր էին այն իրիկուն ի Բրաղէր։ Շեօնաուրֆի այս խնդագին ընդունելութենէն ոգեւորուած, թէև ինքնին սըրտամբ բնաւորութիւն ունէր, պատմած էր իր երկարատև ուղեւորութեան ուշադրելիս պարագաները, որոց նոր հրապոյր մը տուած էին մի քանի դեղանկար, անակնկալ միջադէպներ։

Ականջ էր երբ Շեօնաուրֆ և կոմսուհին, երկու ուղեցոյցներու և մի սենեկապանի հետ, որ Գուստոյայի վաղմի մի մարմինն էր, եւած էին այցելել Գալատրայի հեռաւոր կրմի մը հին այլ նորագիւտ ջերմուկներն, վեց տարադէմ մարդիկ յանկարծ պաշարեր էին զիրենք, մարդիկ որ, առաջնորդու հազուստ ու տարազ ունէին, ինչպէս որ վայել էր և, լաստ առնդութեան, իրենց արհեստին միայ կ'պատճաչին, թէև ողբմելի կերպով զգեստած էին. ուղեցոյցներէն իսկոյն կռիւը դրած լինելով՝ ուղեւորներն սոխոպեր էին լրենց դլուխն ճարը տեսնել։ Շեօնաուրֆ նշմայր մ'ընելով իր պատասուրին որ իր օրինակին հետեւի, գերպանէն բլվլըմր մը հանած, ուրիշ մ'ալ կոմսուհւոյն տուած էր, և երեքը միասին առազակներուն ուղղելով հրացաններն՝ պատրաստ կրակ տալու, պատեր էին սառնութեամբ յարձակման, որ, սակայն, տեղի ունեցած չէր։

Արդարև՝ լեռնցիներն ուղեւորներուն այդ արիական դիրքը տեսնելով՝ շուարեր և նվաստեր էին նաև, որ երկ յաղթող եկող ելնէին, դարձեալ անվրաւորը չկիսի ազատիլ լրենց կռչին, որ թէև պզնձադոյն, աչ նուազ յարդ ունէր լրենց աչքին։

Ապա, յանկարծ, մեծ եռանդ ու լանդ զդացին նորաեկ և

* Այս սեռական անուանքն կ'կոչուին մեծ և ազնուական դերդաստանն ներու նորաեկ որերդներն — ինչպես իշխանները, կոմսերու, դքսերու և պատանիներու դասերը։

դեղանի ուղևորուհւոյն համար, որ այնքան հանդարտ ու անվեհեր կերպարան մը ցոյց տուեր էր վտանգին ժամանակ, և իրենց ատրճանակները վար դնելով՝ օղը նետեցին զվարկներն՝ պոռալով կեցցէներ ի պատիւ տիկնոջ, մինչդեռ աւազակաց մին, անչուշտ դունդին պարագլուխը, կ՝ներկայէր կոմսուհւոյն վայրի վարդերու փունջ մը, որ իր թաղեայ դդակին լարէն անցուցած էր, և կ՝առաջարկէր ճամբորդներուն իբրև ուղեցոյց ծառայել, մինչև ջերմուկները։

Կոմսն ընդունեց այս առաջարկն, և նորատի կինը ժպտելով կապեց վարդեայ փունջն իր չփակին։ Ճամբայ ելան ձիաւորներն, աւազակներէն պահպանուած, որոց պարագլուխը կոմսուհւոյն ձիուն սանձը կ՝բռնէր դժուարամատոյց անցից մէջ, այդ պատիւն ուրիշին չտալով։ Երբ հասան ջերմուկներն՝ ուղեւորները գտան անդ պարզ ճաշ մը։ Աւազակներէն մին կորուկ ճամբաներէն կանխաւ դացած և զայն պատրաստած էր. այս էր՝ թուղ՝ դեղնորակ և մեղրի պէս անուշ, չամիչ՝ երկար և սաթագոյն հատիկներով, բաւական լաւ երշիկ մը, տակին հոտը տուող գինի մը, դանակով կտրելու չափ թանձր, և անոր մօտ՝ ժայռի մը ճեղքէն հոսած վճիտ և պաղպրակ ջուր մը։ Միայն հաց չկար, վասն զի հացագործը շատ հեռու կ՝գտնուէր, և հացի պաշարը քանի մ՝օրէ ի վեր սպառած էր։ Աւերակներն այցելելէն և ճաշն ատարեցէն ետև՝ վերստին ճամբայ ելեր էին, նոյն ուղեկիցներով, մինչև վայր մ՝ուր վտանգը կ՝սկսէր ատզականերուն համար։ Կոմսն, ի վարձատրութիւն, անոնց բաւական մեծ գումար մը տուած էր։

Մինչդեռ բազմաթիւ կոչնականներ Շեօնտորֆի կոմսին բոլորտիքը խմբուած՝ մարկ կ՝ընէին այս արկածին պատմութիւնը, հեռուն՝ սեղանին մի ծայրը՝ Գոնրատ Ագէնսդէյն իշխանն՝ նորին վեհափառութեան Աւստրիոյ կայսեր հին դեսպանն արևմտեան մեծ տէրութեան մը մօտ, չքնաղ մոքի տէր մարդ, և բազմափորձ երաժիշտ, մեկուսի կոչեր էր Մելսի դերկոմսն, Ֆրանսայի դեսպանատան նախկին քարտուղարն, և անոր հետ կ՝խօսակցէր։ Այս Ֆրանսացին, քաջավարժ ձիաւոր, ի Մանսպերկ կարդուեր և՝ պահ մ՝ետք իր պինդ օրական սպասարէգը թողլով՝ Դանուբի ափունքն եկեր էր տուն տեղ կազմելու։ Իր սիրալիր ձրից համար բարձր ընկերութեան մէջ գրկարաց ընդունուած և անոր չփացած մի գաւակն եղեր էր։ Մելսի դերկոմսն արտասովոր ղիւրութեամբ դիտէր համակերպիլ իր տգ-

ապրած միջավայրի բարուց և սովորոյթեանց և զսրմանալի կեր-
պով կ'խօսէր մինչև անդամ փողոցներու գունդիկ բարբառը։

Իշխանն ու դերկոման այնպիսի աչխուժիւ կ'խօսակցէին որ
դիտողը պիտի կարծէր՝ թէ քաղաքական չատ ծանր խնդրոյ մը
վրայ կ'վիճաբանէին, և սակայն այնպէս չէր։ Գոնրատ իշխանն
իր խօսակցին կ'զեղչեղէր եղանակ մը՝ զոր ձայնագրեր էր դեր-
կոմսին յօրինած մէկ տաղին վրայ։ Թատերգի մը կարևոր մի
կողմն էր այն՝ զոր միասին կ'պատրաստէին և որ մօտ օրերս պի-
տի ներկայացուէր, ու և է բարեգործական նպատակի համար։
Այս ներկայացումը պիտի տային գեղարուեստասէր անձինք՝ որ
վիէննայի ազնուապետական դասերուն կ'պատկանին։

Այս երկու անձերու մօտ՝ Ցաբանի և Հէրէտի կոմսերն՝ որ
Հունգարիոյ մէջ միերու յատուկ երամակներ կ'պահէին, կ'վի-
ճէին այս կենդանեաց ցեղային զանազանութեան վրայ։ Իսկ ա-
զանին դիմացի ծայրը՝ նորատի սպայ մը, որ վայելչապէս կ'կրէր
հիւսարներու հարիւրապետի կապոյտ թիկնոցակն (dolman),
կարծես թէ անտարբեր կ'մնար բոլորովին խօսակցութեան։ Իր
յատուկ խորհրդածութեանց մէջ ընկղմած՝ ճակատը մթագին,
մերթ ընդ մերթ Շեօնաուրդի իշխանին վրայ կ'նետէր ակնարկներ
որ տարօրինակ նշոյլներ ունէին։ Միւս կողմէ կոմսն ևս կ'դի-
տէր զանի դաշնուղողի։ Նորատի սպային դէմքին վրայ պահ
մը կենդանութեան նշաններ երևցան, երբ Շեօնաուրդի պատմեց
թէ կոմսուհին ինչ վտանգներու հանդիպեր էր Դալապրայի լեռ-
ներուն մէջ։ Բայց լոկ փայլակ մ'էր այն, և սպային վերստին ըն-
կաւ իր խոր մտածութեանց մէջ։

Ցանկարծ խօսակցութիւնները դադրեցան և խնդագին բա-
ցագանչութիւններ լսելի եղան։ Նոյն միջոցին ամենուն ձեռ-
ները կ'ուղղուէին բարձրահասակ մարդու մ'որ բաց ու ժպտուն
դէմք ունէր, աղբերակ կիսամօրուսով բոլորուած, և որ յառաջ
կ'գար դէպ ի սեղանը։ Այն նորեկ մարդն՝ որու գալուստն այս
համակրական ցոյցերուն պատճառ էր, Պառն Ֆաֆֆիցն էր,
վիէննայի ամենէ նշանաւոր անձնաւորութեանց մին, պերա-
զանցապէս կենցաղասէր մարդ, զուարթաբան ու լեզուանի, այ-
լազան ձրից աէր, հմուտ՝ լուրջ, կենսական խնդիրներու, ինչ-
պէս նաև արուեստի. ընծեր պաշտօնեայ լինելու կարող, եթէ
կայսեր խելքին փչէր զինք կոչել ի պաշտօն և դահլճին անդամն
ընել, ոչ նուազ ձեռնհաս վարելու վիէննայի մեծադոյն թատ-
րոններէն մին, եթէ վեհապետին մի քմահաճոյքն այդ ունակ
պաշտօն ո՛անոր յանձնէր։

— Ներեցէք ինձ, սիրելի կոմս, ըսաւ նա մօտենալով հանդիսին դիւցազնին, որ անկարող եղայ միանալ ձեր բարեկամներուն . . . հրաւէրը մը զոր հնարին չէր ինձ մերժել . . . :

— Բոլորովին ներեալ կաք, սիրելի Պատոն, ըսաւ կոմսն և ձեռքն անոր կարկաւեց: Մեծապոյն ցաւն քարեկամներս և ես զգացինք: Անհունս չնորհակալ ենք որ բաւական չուտ կարող եղաք ազատիլ և գալ մեզ գտնել: Միթէ հրաւէրն նշդինէ իշխանուհւոյն կողմէն ընդունած չէիք:

— Մինչև յետանդն՝ առաւօտուն այդպէս կ'կարծէի, ըսաւ Պատոնն աթոռ մ'առնելով և դլանիկ մը վառելով, բայց նոյն օրը կ'ընդունիլ հրաւէր մը Ֆրանսուա արշիդքսէն, այնպէս որ կ'տխալուիլ ներումն խնդրել իշխանուհիէն . . . :

Այնուհետև կոչնականներն սկսան դիտողութիւններ ընել Պատոնի ատացած զանազան հրաւէրներու վրայ և կծու կատակներ տեղալ. խօսակցութիւնն աւելի վառվռուն կերպարան մ'առաւ: իսկ Պատոն Բամնիցի ափսէն անոպառելի էր. կ'թափիը բերնէն սիրային վկաիկներ, սրահի զրոյցներ, այնպէս որ ընդհանուր քրքիջ կ'պատճառէին:

Բայց արդէն մուխը չորս դին պատեր էր լիովին, Թէև երևկոյեան զովագին օդն զգալի, և ոչ հիւր մը կ'խորհէր քաչուիլ: կանթեղներու և կազի լոյսն ծառերու տերևներուն ատորին մասը կ'լուսաւորէր միայն, մինչդեռ անոնց կատարն ատուերին մէջ մնալով, աստղազարդ երկնից կամարին վրայ իրեն սև կոյտ մը կ'նկարուէր: Պահ մ'առաջ Բրադերի մէջ տիրող ազմկալի ոգևորութիւնը դադրեր և լռութիւն յաջորդեր էր. իսկ միայնութիւնը կ'ատելնար մթին ծառուղիներու մէջ, Եւ իրօք՝ միևնոյն կանուխ տուն կ'դառնան, նահապետական սովորութեան մը համեմատ, որ օդտատէտ երիվարի մը չնորհիւ ցարդ կ'պահպանուի: Աժեն ոք պարտաւոր է վճարել մէն մի տան պահպանութեան հսկող պահակին հարկ մ'որու կ'ենթարկի, երբ ժամը տասնէն նոր տուն մտնէ:

Շ. ԴՕՐՊԻՆ
(Շարունակելի)

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԻՒՆ*

ԳԱՍ Թ.

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԶԳԱՅԱՐԱՆԱՑ

Այս դասախօսութիւնս նարին սա ոճմանը. — Իր էֆէլի երկրորդ դրքին մէջ՝ Ռուսօ կ'ըսէ. — «Զգայարանքը մարզելը՝ կերպով մը խորհիլ սորվիլ է. վասն զի՝ ինչ եղանակաւ որ մեզ հրահանգեն այս մասին, այդպէս միայն կարող ենք դիտնալ չօշափել, տեսնել, լսել:»

Իրօք՝ ծնունդեան առաջիկայ մեր վրայ յուզած զգայնութիւնները բաւական չեն այդ առարկաները մեզի ծանօթացնելու, վասն զի մեր զգայարանքը կրնան մեզ պատրել, ինչպէս որ պիտի տեսնենք վերջը: Բաց ասոր՝ անթիւ ծանօթութիւններ կ'ըստանայ մարդ իր զգայարանաց միջոցաւ. ուստի չատ կարեւոր է այնպիսի վիճակ մը ստալ, ըստ կարի, այդ զգայարանաց որ կարող լինին օգնել մեր իմացական կարողութեանց զարգացման:

Կարելի է զգայարանաց դաստիարակութիւնն այսպէս սահմանել. Դաստիարակութիւն՝ որ կ'կայանայ զգայարանքը մարզել այնպէս որ կարող լինին ճնշաւոր կատարելութեան հասնիլ: Ասիրտիւ կապուած է այն մտային դաստիարակութեան հետ, որու՝ կերպով մը, իրեւ ներածութիւն կ'ծառայէ, և ունի բարոյական ներգործութիւն, վասն զի, մեծ մասամբ, այդ միջոցաւ մարդիկ կ'ստանան մարմնային և այլ լաւ սովորութիւններ:

Բայց Թերևս ըսուի. միթէ այնքան պիտանի է զգայարանաց դաստիարակութիւնը, կամ, աւելի պարզ խօսելով, միթէ իրօք կրնայ լինիլ զգայարանաց համար դաստիարակութիւն մը: Ընութիւնը տալով այդ զգայարանքը մանկան, միթէ դործածելու եղանակն ալ չըսորվեցներ անոր: Կարելի է պատասխանել թէ՝ արդարև, մանկական հասակին մէջ տղան, դեռ ևս իր նմաններուն հետ ուղղակի հաղորդակցութեան մէջ չմտած անդամ, իր զգայարանաց միջոցաւ կ'ստանայ չատ ծանօթութիւններ,

* Տե՛ս Ցուցից ատենագիր, երես 303:

բայց ընդհանրապէս անկատար և ստէպ թիւր են այդ ծանօթութիւնները։ Ուստի զգայարանաց դաստիարակութեան նպատակը պիտի լինի տալն բնական հակումէն օգուտ քաղել՝ ուղղելով զայն և անոր գոհացում տալով. վասն զի տղան արդէն յինքն ունի մարդն՝ իր բոլոր կարողութեանց, բնազդումներու նշաններով, և պատրաստ կ'գտնուի իրեն տրուելիք ուղղութեան հետևիլ։ Կ'սեանէ նա առանց նայելու, կ'լսէ առանց միտ դնելու և պէտք է ուսցնել անոր նայիլ և միտ դնել։ Հետևապէս այս դաստիարակութիւնն օրօրոցէն պարտի սկսիլ։

Այս դաստիարակութիւնը կրնայ լինիլ բաւական բաժանուած, եթէ ի նկատի առնուի միայն մէկ զգայարանի զարգացումն, ինչպէս կ'պատահի՝ երբ մարդ լոկ մէկ գործի կամ արհեստի կ'նուիրուի. կամ ընդհանուր, երբ նպատակ ունի բոլոր գործարաններն, կարելի եղածին չափ, մարզել ժողովրդական կենաց համար։

Զգայարանաց ընդ ա՛ռ դասակարգումնէ։ — Մարդու բոլոր զգայարանքն ալ և նոյն կարևորութիւնը չունին։ Մէկ քանին, զոր կարելի է ոտքին կոչել (հոտառութիւնը և ճաշակելիք) մեզ շատ չեն հրահանգեր, վասն զի անկից ծագած ըմբռնումները կարի քաւան են զգայնութիւններով *. ընդ հակառակն, միւսները զոր կ'անուանենք վերին, մեզի կ'տան ղուտ և ազնիւ ծանօթութիւններ (չօշափելիք, լսելիք, տեսանելիք)։ Ուստի կարելի է այսպէս դասակարգել զգայարանքը. ճաշակելիք, հոտառելիք, չօշափելիք, լսելիք, տեսանելիք։ Ըստ այս դասակարգութեան պիտի քննենք զգայարանքը։ Նախ կ'առաջարկեն ասոնց յաւելուլ ուրիշ երկու զգայարաններ, այս է՝ գոյնիկան կամ կենսական զգայարան, որով կ'իմանանք մեր մարմնոյն այլ և այլ վիճակները, օրինակի համար, հիւանդութիւնն և բարօրութիւնը, տենդը, յոգնութիւնն, ինչպէս նաև անօթութիւնը, ծարաւն և այլն և այլն. և ինչպէն զգայարանն՝ որ մեզի կ'տայ ծանրութեան, դիմադրութեան, տոկունութեան գաղափարներ։

Զգայարանքը ժամանակագրական իմն կարգով կ'զարգանան,

* Վեպեր այսպես կ'բացատրէ զգայնութիւնն ու ընդունարը. առաջինը կը շարժէ զգացողութիւն (առնախկնե), կրնայ պատճառել համճոյք կամ ցաւ. երկրորդը մտքի հետ յարաբերութիւն ունի և ծանօթութիւններ կ'հաղորդէ։ Եթէ մեր մատներուն ծայրը գանակի կամ ածելիի սուր շեղբը դպնենք՝ կարծր և ոտրկ մարմնոյ մ'ընդունարը կ'ունենանք, բայց եթէ յանկարծ այդ շեղբը կարե մեր մատն, կ'ծագի զգայնութիւն (առնաստ), և մեք զգացած ցաւը չմոռնար որոշել մարմնոյն ո և է յատկութիւնը։

որո՞նք աւելի շուտ կ'ոչնչեն, ահա չատ չհասկրդիս խնդիրները, այլ սակայն մեր գծած սահմանէն դուրս լինելով՝ բաւական է քննել միայն առանձին մէն մի զգայարան և ցոյց տալ թէ դաստիարակին ինչ օգուտ կրնայ քաղել:

Դասախօսականին ճաշակելեաց. — Այս զգայարանի մարզումը պարտի լինել պահպանողական, վասն զի ճաշակը անստոյգ մը դարան է զոր բնութիւնը կ'լարէ տղոյ և որու դէմ հարկ է զգուշանք զգուշացնել: Ուստի պէտք է հոգ տանել, այդ զգայարանը գոհ ընելու համար, որ մանուկն ոչ չատ փափկասէր և ոչ չափազանց պահանջող լինի, վասն զի այս մասին զեղծումն այնքան դիւրին է և երբեմն չատ հրապուրիչ իրեն համար . . . :

Բայց քանի՛ քանի՛ չարիք կրնան պատճառել ճաշակելեաց անկանոն գոհացումը: Ի՛նչ մեծ աղէտներ ծագած են ոգելից ըմպելեաց կիրառութենէ և ինչ ոգրտի սերունդ մը կ'զառնայ այն որու նախնիք դիտմամբ եղած են: Ստոյգ ուսած է որ պէտքի հայր մը ծնունդ կտայ տղայ մը և ասոր ալ որդին կառաջի լեզնդ մը պիտի լինի: Ամենամեծ չնորհը կ'մատուցանէ մանկան այն որ կ'վարժեցունէ զանի ամեն տեսակ ուտեստ ճաշակել, իր անկարդ ճաշակներն ու ընդդիմութիւնները զսպել, և սեզանի տօնէն չ'յզփանալ:

Փող կըսէ Ռոսօ, մանկան անունդը լինի հասարակ ու պարզ, Ե՛ղ իր քիմքը չընդելմնայ համադանիներով և իր ճաշակելիքը լոկ այս կամ այնինչ ուտեստով գոհ չլինի: Այստեղ կը ներկայի նաև խնդիր թէ՝ մանուկը միթէ օքրօ՞ կ'ծնի. այնինչ՝ բնազէս կ'փափաքի իր կազմութեան պահանջածէն չատ աւելի կերակուր ուսել: Ես կ'խօսի այս մասին բնութեան ուննացած անձեռնհասութիւնը: Աքենոէ, ինչպէս արդէն յիշուեցաւ, կարծէ թէ տղոց ախորժակն անվրիպելի ուղեցոյց մ'է, թէ որկրամոլութիւն կարծուածն ուրիշ բան չէ, այլ մանկան կազմուածքին յատուկ պիտոյից գոհացումը. բայց և այնպէս տղայք կրնան որկրամոլ լինել եթէ անոնց անունդը չափէն աւելի նուազի:

Այս մասին նա կ'հետևի Ռոսոյէ, որ կըսէ. — « մեր ախորժակը կըսէ անկանոն կ'զառնայ այս պատճառաւ, որ կուզենք անոր տալ բնականին ներհակ կանոններ, միշտ կչխտ ի ձեռին, կ'չափենք, կ'հրամայենք, կ'յաւելունք և կ'պլանանք. բայց մեր քմահաճոյքն է այդ կշռոյն չափն և ոչ ստամոքսը: Միշտ կ'զառնամ իմ օրինակներուս: Գեղացւոց տունն՝ տաշտն ու պղպտրանը միշտ

բաց են և ազատ, ինչպէս մարդիկ, չդիտեն թէ ինչ է անմահ-
ութիւնը։»

Մեկնողն թողուլ այս դժուարալոյծ, և թերևս անլուծանելի
խնդիրն, բուսական կ'համարինք յայտնել նաև, որ երբեք դար-
ձածել պիտի չէ ճաշակելիքն իրրև պատժոյ և վարձքի գործի,
թէև նշել այս մասին տարբեր կարծիք ունի։

Նա այնպէս կ'կարծէ, որ «ազատքը վարելոյ յարմարագոյն
միջոցն է բերանը· վասն զի որկրամոլութեան չարժտութիւն նա-
խամեծար է քան ունայնասիրութեան դրդիռը· մին ուղղակի
դպչարանաց հետ յարաբերութիւն ունի, միւսը կարծեաց արա-
դիւնքն է։ Որկրամոլութիւնը մանկութեան կիրքն է ... ուրիշ
ո՛և է կրից առջև չդիմանար· կ'անհետի թեթևագոյն մրցմամբ
...։» Ռուսօ կ'երևի այս տեսութեամբ իր ընթերը յատկու-
թեանց և թերութեանց մէջ։

Դաստիարակութեան հպատակեցաց· — Ինչ որ է հատատելիքը ճա-
շակի նոյն է տեսանելիքն ջօչափելեաց համար։ Հատատելիքը
կ'աղտարարէ, կ'գրամադրէ ճաշակն մերժել կամ վնտռել այն
առարկութիւնն զոր մարդ կանխաւ կ'ընդունի։ Հատատելեաց
տգղած բոլոր առաւրութիւններն են ինքնաթեր և անչահա-
խնդիր։ Ըստ Ռուսօի՝ երևակայութեան ղեկավարանն է, վասն զի
ջիղերուն կատ աւելի ուժգին զարկ և ուղեղը կ'դրգռէ։ Ան-
տարակոյս յիշողութեան հետ ևս սերտ յարաբերութիւններ
ունի, վասն զի չկայ անձ մ'որ, ո և է որ մը, ղեկացած չլինի,
մեռած յիշատակի մը զարհուռնն, յիշատակ՝ որ անուշահոտ
բուրմամբ մը կ'վերածնի։

Եթէ հատատելիքն կապուած է ղեկացողութեան հետ, այս
ևս պատճառ մ'է տուղ այդ ղեկավարանին, ինչպէս ճաշակին,
յատուկ դաստիարակութիւն մը և զոյն չափն ունի չդուել։
Այն կրթութիւնն՝ որով մանկտին կ'վարժուի շատ փափկու-
թեամբ հոտերն ըմբռնել, վատ է· վասն զի բնաւորութեան
առնութիւնը կ'վատթարէ, ղեկացողութեան վտանգալի ճարակ
կ'ընծայէ և կամքն կ'ջլատէ։

Արևելեան բնաւորութեանց մերթ թոյլ և մերթ դիւրա-
դրդիռ վիճակը կ'վերադրուի հոտաւէտ օծանելեաց չարաչար
գործածութեան։ Ռուսի հարկ է որ մանկտին վարժի անորո-
տունջ հանդուրժել անախորժ հոտերու և կամ քիթը բերանը
ղղուանաք չծռմրկել։ «Այս սովորութեամբը, կըսէ Պ. Բէրկպ,
կ'ապահովի նա կենաց շատ տագնուներէ և կ'յաջողի իր առա-

մեքսն ու դլուխն անվրդով պահել մի չատ անակնկալ և անախտանելի պատահարի մէջ։»

Վ.

ՈՒՐՈՒԱԴԻՐ ԴԻՏՈՒԹԵԱՆՑ*

17 Յունուարեան նշանակութիւնը։ — Այժմ նայինք թէ՝ ինչ է ծանրութեան նշանակութիւնը։ Կ'ըսենք թէ բան մը ծանր է, երբ՝ զայն դեռևին բառնալու փորձելով, կամ ձեռայ մէջ պահելով, կ'ըզգանք որ ճիգ մը կ'ընենք։ Դարձեալ՝ եթէ դեռևին վեր բարձր տեղ մը կեցած բան մը կորուսելով իր կառուանը վար ընկնի, կ'ըսենք թէ այդ բանը ծանրութիւն ունի։ Այդ՝ դեռևին ըսելով կ'իմանանք պարզապէս երկրիս մակերևոյթը, և որովհետև ամեն ծանր մարմիններն կ'ընկնին ուղղակի երկրի մակերևոյթին վրայ՝ երբ չեն հանդիպեր արգելքի, կարող ենք ուրիշն ըսել, որ ամեն ծանր մարմիններն հակում ունին այս կերպով ընկնելու։ Իսկ այդ փորձն երկրիս մակերևոյթին ո՛ր կողմն որ կատարուի, փոյթ չէ։ Անձրևը ջրի կաթիլներէ կ'բաղկանայ, եթէ հանդարտ օդով նկատենք այս կողմերը կամ Նոր–Զէլանտայի մէջ վաղած աարակի մը, մի և նոյն բանը կ'տեսնենք։ Կաթիլներն ուղղաձիգ կ'վազեն դէպ ի դետին։ Բայց դիտենք թէ երկիրը գնատաձև է և Նոր–Զէլանտա մեկի հակատնեայ է, այսինքն՝ Անգլիոյ հակադարձ եղող գնտին կողմն։ Այսպէս եթէ մի և նոյն ժամանակ անձրև գայ թէ Նոր–Զէլանտա և թէ Անգլիա, կաթիլները ներհակ ուղղութեամբ պիտի ընկնին, այսինքն՝ դէպ ի երկրին կեդրոնը՝ որ կ'գտնուի անոնց մէջ։ Արդարև՝ ամեն ծանր մարմինները դէպ ի երկրի կրկրոնն ընկնելու կ'հակին — այսինքն՝ այս կերպով կ'ընկնին եթէ արգելքէ չհանդիպին։ Հետևապէս՝ երբ կ'խօսինք ծանրութեան վրայ, կ'իմանանք այս անկման հակումն։ Ո և է բան ծանր անուանել, կ'նշանակէ հաստատել թէ այդ բանն անշուշտ դետին պիտի ընկնի եթէ անարգել, ազատ ձգուի, կամ եթէ զայն վերցնելէ ետքը մի իտակցութիւնը պիտի ունենանք։

* Տե՛ս Յուլիս ամսագիր, երես 306։

18. Մանրամասնեալ և ձանրակռռեալ. — Այդ ճանրութիւն բառը երբ առաջին անգամ գործածեցին, ճիշտ մի և նոյն նշանակութիւնն ունէր ինչ որ ունի կշիռը։ Ուստի կ'ըսուի թէ մարմին մ'որ կշիռ ունի կ'հակի ճանրութեամբն դէպ ի երկիր։ Սակայն հիմա ճանրութիւնն աւելի ընդարձակ իմաստ մը ստացած է քան կշիռը։ Վասն զի՝ անթիւ հասուն դիտողութիւններ և փորձեր հաստատած են այս ընդհանուր կանոնն, այս բնական օրէնքը, թէ ամեն նիւթական մարմին կ'ձգտի մօտենալ ուրիշ նիւթական մարմնոյ ճիշտ այնպէս ինչպէս անձրևի կաթիլ մը կ'ընկնի երկրի վրայ, և թէ իրօք ո և է նիւթի մը երկու մասերն, ինչ տեսակէ որ լինին, պիտի չարժին իրարու կողմն՝ եթէ այս չարժման դէմ արգելք մը չլինի։

Այս կէտը լուսաբանելու համար ենթադրենք թէ՝ բոլոր տիեզերքի մէջ, միակ նիւթական մարմիններն են՝ ջրի երկու գնտակերպ կաթիլներ, մէն մին ունենալով բաժամասի մը տասներորդ մասը տրամագիծ։ Ուրոյն կաթիլ պիտի ունենայ նաև մի և նոյն զանգուածն և միւսին համահաւասար քանակութեամբ նիւթ պիտի պարունակէ։ Արդ այս երկու կաթիլներու իրարմէ հեռաւորութիւնն որչափ մեծ լինէր, պիտի սկսէին իրարու մօտենալ և ուրոյն կաթիլ աստիճանաբար արագութիւնն աւելցնելով՝ ի վերջէ պիտի միանային ճիշտ այնպէս կիտի մը վրայ, որ թէ միոյն և թէ միւսին բունած նախորդ տրեց ճիշտ կիսաչափը պիտի լինէր։ Բայց եթէ կաթիլներն միոյն զանգուածն քան միւսը մեծ լինէր, ատուարագոյն կաթիլն աւելի ծանր պիտի չարժէր և հանդիպման կէտը պիտի գտնուէր նոյնչափ աւելի մօտ մեծագոյն կաթիլին։ Ատոր կ'հետևի որ եթէ ջրի մէկ կոյտ երկրին չափ խոշոր լինէր և միւսն իր նախկին զանգուածը պահէր, այս է՝ անձրևի կաթիլ մը մեծութիւնըն, ատուար կոյտին չարժումն դէպի փոքրը բոլոր անցած հեռաւորութեան անհունապէս փոքրիկ մի կոտորակը պիտի լինէր։ Այնպէս պիտի թուէր թէ՝ ատուար մարմինը բոլորովին դանդաղ է և թէ փոքրիկ մարմինը դէպ իրեն կ'ձգէ։

Ահա այս կ'պատահի երբ ջրի պարզ կաթիլ մը կ'ընկնի ամպէն վար, զրեթէ մէկ մլուն հեռաւորութիւն կտրելով։ Երկիրն իրապէս կ'չարժի դէպ ի կաթիլն, ճիշտ ինչպէս այս դէպ ի երկիրը կ'չարժի, հետևելով ուղիղ գծի մ'որ երկուքին կեդրոններն կ'կապէ։ Բայց այս գծին երկայնութիւնն որմէ իրա-

պարունակած նիւթին քանակութեան, այսինքն՝ այնչափ աւելի կարճ է ըրչափ քանակն խոշոր է։ Այսպէս կ՚ունենանք համեմատական խնդիր մը։ Այս երկրի պարունակած նիւթի քանակն այնպէս կ՚համեմատի կամիլ մը ջրի պարունակածին հետ, ինչպէս մէն մը՝ երկրի ընթացած հեռաւորութեան հետ։ Եթէ այդ գործողութիւնը կատարենք, պիտի անանենք որ համեմատութեան չորրորդ եզրը պիտի ելնէ ըթամատի մ՚ամենամանր կոտորակը։ Սակայն գոնէ նպէս կարող ենք նկատել երկիրն անշարժ նկատմամբ ընկնող մարմիններու, մանաւանդ այն պատճառու որ այս մարմիններու նիւթի քանակն աննշան է երկրի պարունակածին համեմատութեամբ։

Ինչ որ ճշմարիտ է ջրի մասին, նոյնչափ ճշմարիտ է մեզի ծանօթ ամեն տեսակ նիւթի համար։ Հետևապէս կարող ենք ըսել, թէ բնութեան մի օրէնքն է, որ նիւթի ամեն տեսակներն ծանրութիւնն ունին, այսինքն՝ թէ երկու նիւթերէն մին միւսին կողմն շարժելու կ՚ձգտի արագութեամբ մ՚որ այնքան տկար է որքան որ իր պարունակած նիւթին քանակն աւելի մեծ է՝ երկրորդին պարունակածին համեմատութեամբ։ Նաև՝ այս արագութիւնն աստիճանաբար կ՚ածի, քանի երկու մարմինները մօտենան։

Արդ՝ սովորաբար ձանրականութեան օրէնք (gravitation) կոչուածն ուրիշ բան չէ, այլ տարբեր և աւելի կատարեալ կերպով ղիտուած մի և նոյն իրողութեանց բացատրութիւնը։

ՀՐՓՍԼԵՑ

ՓԱՌԱՀԵՂ ԴՊՐՈՑԱՏՈՆ

ՊԼՐՊԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Այս տարուան Մրցանակաց և Վկայականաց Հանդէսն, իր արտասովոր չքեղութեամբ, վերջ մ՚աւելի կ՚յաւելուր Պէրպէեան վարժարանի կրթական փառաց և վեհուր մ՚աւելի նորա զարգացման ճշմարիտ համբաւոյն, զոր, աւա՜ ետեղ, կ՚ձեռագրեմ ձեզ։

Յուլիս 29, ուրբաթ. Վիջուրէն մէկ ժամն անցած։ Նսոր առ
ջանցաւ ամպոց շղարշք՝ երկնաւոր սնդուսէ արևարդել։ Հրա-
վիրեալքն հատընտիր։ Պօղոս ամէն կողմերէն, հետզհետէ, կո-
հակ առ կոհակ հեղեղուն։ Համազգեաց հոսանքին հետ և չ'հա-
մաղգեաց ընորհալի վիճք։ Անձնիւրն ղպրոցական ասնի դեղե-
ցիկ խոսից ծարաւի։ Շնորհաց, հքոյ, դեղոյ տիպ ու տիպար։
Ըստ որում լուր օր, մեծամասնութիւնը դեղեցիկ սեռէն։ Հե-
հիք ըղեզածին Աթենասք քան փրփրածին Աստղիկներ։ Հա-
մայնք ղդաստք Անահիտք։ Պէրպէրեան նախկին սաներ՝ պաշ-
տօնական ընկալուչք։ Ճեղեըչքն աղջիկներ, որք ոստանիկ առ-
պետի աչխուժավառ դուրգուրանօք կ'առաջնորդեն ծանրա-
շուք հարց, նազելաչուք մարց և չէ՛ քերց, տաղաւարաց այն
հսկայքին ներքև, որ լեզէոններ պարտածածկելու չափ ընդարձա-
կածոց և լայնատարած ստ կ'հովանաւորէ հանդ իսի դրախտավայրն
ամբողջ ընդգրկած։ Դափնեզոր ձիգ չղթայ մի, օձագալար տա-
ղտկելով ստորոտէն ցծատ, կ'շրջապատէ մեծ կայմն, որ կը-
կրէ կատէ երկինքն իւր վրայ, նորա երկնաթռիչ նետէն կ'ծա-
ծանի Օսմանեան դրօշը, ղօրէն վեհափառ Աչդ մի, անդ մեր
համայնից վրայ բարձուստ թևարկու։ Հանդիսավայրն՝ յորդե-
լու չափ ոզոզուն։ Այր համատեսիլ աստեղախուռն ամպիթա-
ատրին վրայ երբ շրշան զմայլուն աչքերդ, ակմբահայլ հոգեկա-
ճառի մը վեհապանծ ներկայութիւնը կ'զգաս, այր հանդէպ մաբ-
միւնը կ'հոգիանայ. մարդը՝ բանաստեղծ, կաւը՝ արդար և սիրտը՝
քնար մ'է։ Ոգևէ աւելի կ'օրհներգես, սլչնուլէ աւելի կ'վերա-
նաս, և Հանդիսավայրն համակ կ'լինի ճաճանչագեղ խոչանե-
րու համատեղութիւն մի։ Ի կեդրոն բազմականաց առաջին
գծին, ղոր կ'կազմեն Պէրպէրեան դահլճին թաւչեայ բազա-
ուունք, և որք նախատահմանեալ են ոտոտասոլոր Աւագանւոյն
և Սրբազնասրոց կեղծ ի նիստ, արևալոզ կ'սպասէ, կ'սմբա-
նայ հայրապետական ոսկեզօծ թիկնեզ Գահոյք մի, և նորա
առջև փռուած՝ արևելեան թաւսաև նախշուն դորգ մի, վե-
հափառ Նախագահինն է այն։ Ամենքին ոգևոր անձկութեամբ
սպասու նմա։

* * *

Ժողովրդեան հանդիսավայրն անչատ մի այլ հանդիսավայր
ևս կայ։ Դպրոցայնոցը։ Բարձրաբանդակ մ'է այն. կուրծքը՝ օ-
թոցապատ, իբրև թափն՝ որ կ'արտահուրէ հանդիսավայրին

հակառակ։ Ֆաթիհի ժամանակակից հաստատեաց պիտակներ, նման սարսուռի առաջակոշման սեռից, երկուսանք կանոն ազէալ կ'բարձրանան ամպածրար, բարձրացնելով սիմոսոյն գամուած մարմնէ և հոգին, անցելոյն վկերէն վոչսոյն երեակն՝ գեր ի վեր դնալ յաստղն ներկայի ցերեկին կամ յամեն ապագայի գիշերոյն։ Այս բուսական ծերունեաց զատ բունք որ դարեր կ'թաղեն իրենց զօս խորշումներուն մէջ, ծիրանեօք քողքուած, գաֆնեօք կանաչազարդ՝ ծաղկահասակ թագուհոյ մի կրծէն, թագաւերմ ճակատ մ'աւելի ճախապանծ, ալ սեղմեն իրենց կարմիր լանջոյ վրայ Օզոստափառ Մահիկն և Աստղն Արևելից, և նոր հարս ու փեսի պէս՝ հեռուէն իրերայ միացած են ծիրանագատ ձողալարով մի, յորմէ կ'կախուին գաֆնեայ յօնաձև աղեղներ։ Խարձրաւանդակին այս ծառաստակ առաջքը՝ թաւի լինել լայնաթև փեղկերն հանուած և կարմիր վարագոյրներն վեր առնուած կաճառասարսի մը մեծ դուռն, ընդ որ կը տեսնուի զարդարուն մեծ սեղանն որ վերայ դէզ դէզ կ'ղողչողան վառակապար և ոսկեզօծ սրցանակներն, հատընտիր մատեանք հոգեվառ հեղինակաց որոց տարողչն թանգարան մը կը ճոխացնեն։ Նոցա հետ խառն են եռալէզու (հայ. դաղ. տառ.) զարդատիպ վկայականք ոլորածոյ և ժապաւինակաձ, յուսումնասիրելոյ մի միայն սկզբնատառն վրան նշանակուած։ Կրնամ ըսել թէ ոչ ուրեք յառաջադէմ ուսանողն այնքան ճոխ և ընտրելագոյն սրցանակ կ'ընդունի որքան ի Պէրպէրեան վարժարանի, որ Տնօրէնն ինչ որ չահի դպրոցէն՝ անձին չահուն հետ տարողչ իւր դպրոցին զարգացմանը կ'ծառայէ։ Պէրպէրեան երբէք անձնական չահադիտութեան աղբիւր կամ ասպարէզ չէ նկատած իւր վարժարան, այլ զայն միջոց կամ ուղի մ'է ընտրած իրեն յաջողակաձ մերձենալու համար անով ազգային և հանրային բարձրագոյն կրթութեան մի իտէային։ Եւ իւր այս կրթական, ինացական իտէալի հաստատուն տարածման և գործադրման համար նահատակի անհնահ յուսոյն քաջալերեալ, անվ'յատ արութեամբ կ'ոգորի։ Առաքեալ կրթութեան և քահանայապետ իմացականութեան, որ կ'վինառէ և կ'հարթէ առէք չէ թէ լուման զոր կ'ձգէ հաստատագետն իւր գանձանակին մէջ, այլ այն գաղափարներն ու սկզբունքն զոր իրմէ կ'լսեն և կ'իւրացնեն ունկնդիրք։

Կարգացուցի և երկոց գեղատիպ թերթեր ձրիաբար կ'բաշխուին հանդիսականաց։ Ահա դպրոցասարտ ուսանող մի՝ Ա-

չակ Եսայեան, ծաղիկահիւս խաւտուտիկ քնար մի, յ'ուղերձ իւր քնարասիրաց Տնօրէնին, կ'ընծեռէ մրցանակաց սեղանոյն մի կողմն, ուր արդէն, մի այլ կողման վրայ, Մեծ. Ֆրէնկեան էֆէնտի, ոսկեխառն ընտիր մետաղեայ գրիչ և կաղամարմի ղեռեղած է, յընծայ Պէրպէրեան ընթացասարտներէն՝ Երուանդ Գարաեանի։ Մի ոք կ'յաւելու ինձ ասել թէ՝ Պէրպէրեան տարտաւարժներէն՝ երկոքին եղբարք՝ Սեթ և Սահեան Ասլանեան, աւելի երախտագէտ զգացմամբ, ոսկեայ բազմարժէք լիալուսին մի կախեր են իրենց Սիրեցեալ Տնօրէնին՝ նորածին Գայազատին, Օննիկին վզէն, որ ահա հեռուն ինձ հանդէպ ցոլացող պատուհանի հայելւոյն միջէն անթիւ և անդիմի կ'պլպլայ, որպէս մեծ դեանքի, մեծ ապագայի այդ մ'աւետող արշալոյսն հորիզոնէն, ինչպէս անմայն նատած է, առընթեր իմ, եռազարուն ու խայտալի Մաննիկ։

Սեղանին աւելն է Տնօրէնին յատուկ թիկնաթոռն, որ շուրջը երկուստեք չարուած են դպրոցին ուսուցչական մարմնոյն և եթ մեներշնորհ բաստեռունք։ Սոցա բոլորտիքն ալ, քիչ մ'անդին, երկուստեք առդ առդ կ'տարածուի ուսանողաց նատարաններու ամիսիմատը· որ վերջին աստիճաններըը կ'յօրինեն բարձրաւանդակին անատիկ պատանէշն և անանց ցանկապատ։ Մըրցանակաց սեղանէն հեռի՝ աջ կողմն է դաշնակը՝ որ առջև կանգուն կայ հայ Մէյէրպէրըն՝ Ա. Խօրասանճեան, որ մատուռը դաշնամուրի մատուռներուն վրայ այնքան ճկուն և ճարտար ճօճալ գիտեն, այնքան մէն մի դաշն հնչյոը զգացմանց արտայայտ գանգիւնն է, որ ունկնդիրն յայլ յայլմէ եղած կ'վերանայ, կը հիանայ։ Խօսից պերճախօսութեան կ'յաջորդէ երգոց պերճախօսութիւնն։ Հանդիսականք Յեսուայ պէս կ'տղերբարկեն որ Արևը պահ մ'աւելի կանգ առնու։ Զախ կողմն է մարմնամարզարանն, ուր ուսանողք ծանրահարելի խաղեր սլիտի խաղան. . . . ։ Պարսպատն շղարշապատ է դասինն ծիր լայն քառակուսի վարդագոյն բեհեզով մի, որ պրտին մէջ, կանաչ յատակի վերայ, սրտաճմլ ողնիաղ մի, սգոցուած սալեաք գրերով կ'ներկայացընէ կայսերական Թաղդան, այնչափ կենդանի որ կարծես Սուլթան Մուրատ ձեռքը մեջանին մէջ նոր թաթխեր, Ռակուզացւոց դաշնագիրը թաթխած նոր սուրգրերը և ճարտարք պայն նոր վերածեր են Թաղդայի. — Գործ ճարտարարուեստ և յիշատակ ազգային առաջնակարգ ճաշակի, վայելչ և նշան գեղաներուն խմրագիր, Տիար Մելքոն Գալենտէրի։

* * *

Յաղագսման քանի մի րոպէ անձուկ մ'լեռոյ, կ'հասնի ա-հաւանիկ և վեհափառ Նախագահը, Ազգընտիր Հայրապետն մեր, Տ· ՄԵԼՔԻՍԵԴԵԿ Մուրատեանց, չրջապատեալ եկեղեցա-կան և աշխարհական պատկառելի պարառուներէ, և դպրոցի դասնեզարդ դանէն՝ իբրև յաղթական կամարի մը ներքևէն՝ կը մանէ ի Հանդիսավայրն: Մուտք հանդիսաւոր՝ զոր հանդիսա-կանք ամենեքին կ'ողջունեն և կ'ընդունին յոտնկայս: Ընդու-նելութիւն մեծաշուք՝ հաւատոյ Ապոտեոզոսի (apothéose) զոր Գալոյ աշխուական դասու վեհաժողովը կ'կատարէ աւասիկ իր հանակրանաց Բանբեռին մէջ: Ա՛լ մեծ դէմքն ամրողջացուցած է հանդիսի պատկերին շուքը: Սակայն մնք են դա խուռն մ'ու-առնողք՝ զ'ոյց Անոք՝ իբրև յաղթականի, խայտանօք կ'ծափա-հարէ զպրոցական մանկտին: ՈՒՍՈՒՄՆԱՒԱՐՏՔՆ են: Անձնիւր սևազգեստ կրծին վերայ ունի կարմիր սնդուսկ չղուն վարդ-ի, ոյր մէջ՝ որպէս մեղու, թառած է սև գլխատառ մի Պ· խորհրդանիշ Պերդեէեան տիպաղօսին: Այս խորհրդանիշ է գլուա հանճարեղ Տիկնոջն Զարուհի Ռ· Պէրպէրեանի: Ա՛լ Պէրպէրեան վարժարանին խորհրդաւոր ծաղիկն է կարմիր վարդը ... վա-ւերական վկայական մի անժխտելի Արժանեաց և Տաղանդի...

Զիւր Ատուածարեալ Նախագահ՝ ազարդական լեզուաւ մի հանդիսականաց ներկայացնելէ յետոյ՝ Տ· Տնօրէնն կ'հոչակէ Հանդիսին բացումն, առ մեր ՕԳՈՍՏԱՓՈՒ ԿԱՑՍՐՆ ուղերձեալ պերճ ՄԱՂԹԱՆՕՓ՝ զոր սրտառուչ առոգանութեամբ մ'ահա կ'արտասանէ Ատանացի ուսանող պատանեակ մի, Յարութիւն Գույումճեան: Հանդիսականք ամենեքին՝ յոտնկայս ունկնդիր: Ապա Վահան Հալաբաշեանեան, Պէրպէրեան նախկին սաներէն մին, ծափահարեալ յաջողակութեամբ կ'դաշնակէ Հաֆոխն Քայլ-երէը:

Տեսչական հանդիսախօսքէն յետոյ կ'սկսին ահա հետզհետէ ուսանողաց երգերն՝ որոց մէջ նշանաւոր կ'հանդիսանայ փա-փուշեան պատանեական իր զմայլելի ձայնով, ինչպէս նաև ար-տասանութիւնք, ճառերն ու մրցանակաց բաշխմունք, որ ծա-փերու որոտմամբ կ'ընդմիջուին յաճախ և կ'սաստկին միշտ: Պէրպէրեան առատաձեռնէ յայս ամ՝ Մեծասանք են ուսում-նասիրք: Ասոնք են՝ Մհրան Սարաֆեան, Երուանդ Սեդրաս-եան, Սրուանդ Լուլֆեան, Վահան Սուրէնեան, Արշակ Նայ-

եան, Սեթ Ասլանեան, Արմենակ Պէյլէրեան, Երուանդ Գարայեան, Յովհաննէս Տէմիրեան, Ստեփան Ասլանեան, Գօլճեան, որ այլ և այլ՝ տնտեսական, մատենագրական, բանահիւսական, կրօնական և իմաստասական, նիւթերու վրայ հայերէն, ֆրանսերէն, արաբերէն, անգլերէն, յունարէն ճառեր կ'արտասանեն:

Հրաժեշտի երգէն ձկնի վկայականները կ'բաշխէ Տնօրէնն և կ'արտասանէ իւր Հռոմկ Բանէը: Ցիսուսի չափ սէր՝ յայտնելով առ իւր աշակերտս, որոնք յարժ իմաստասիրութեան մի բարձրականաւ կ'յորդորէ զայնս ճշմարտութեան Աւետարանիչներն և Առաքեալները լինելու: Անդքան վարկութեամբ և դորովանօք կ'խօսի ատա Տ. Պէրպէրեան յ'արտասուս փղձկելու չափ յուզեալ և յուզիչ, որ կարծես նոցա մայրն է քան Տնօրէնն, որ կուրծ նոցա սրտովը կ'տրոփէ և հոգին անոնց հոգերովը կ'տառապի: Վերջին խօսքը վերջին դասն է, դաս իմաստասիրական որ տարիներու և դարերու դասերն իր մէջ ամփոփ կ'համառօտէ և որուն աւարտումն լսել չուզեր մարդ . . . :

Հանդիսականներէն՝ բազմամեայ պատուելին Յակոբ Ոսկան և ծանօթ քերթող Յովհաննէս Սեթեան պատիւ կ'ունենան ատենա մէյմէկ դրատոր խօսք արտասանելու Պէրպէրեան դպրոցասէրներուն մէջ: Առաջինն քրանցնելու չափ երկար վարդապետականով մի առ ուսումնասիրաս, երկրորդն՝ մեզ զարմացընող պայլականաս մի առ իւր Պէրպէրեան էֆէնտի: Ջ'ուսումնասիրաներն կ'ընդունէ վ.սեմ. Աղաթօնի փեսայ և նախկին Պէրպէրեան՝ Օննիկ Արամեան՝ հոգեյոյզ դրատորականաս մի:

Հուսկ ապա՝ վեհափառ Նախագահն՝ որ պարթևական դիմաց վերայ ճառագայթող հոգեկան ցոլացումէն հանդիսականը կ'համակուի, վեր ինքնէն անճառելի դողումով մի, Ծոր-նաղի ճշմարտութեան առածն իրրև բնաբան ընտրելով՝ Սիրեցեալ Տնօրէնին ճշմարտասիրութեան ոգին ի վեր կ'հանէ ֆիլիքոնեան պերճախօսութեամբ, և մանկավարժ իմաստասիրի մը նման բացատրելով ուսուցչին այն նախանձախնամական դերն՝ զոր ունի նա մանկան ճակատագրին վրայ: Ճշմարտասիրութիւնը կը բարձրացնէ, կ'պանծացնէ, կ'զգեստէ առաքինութիւնը և ցիսուսի արձագանգելովը կ'խարազանէ ստախօսները, ճշմարտութեան այդ աւազակները՝ որք մարդկային առաքինութեան տաճարն իրենց մոլութեան անճաւն են ըրած: Ազդեցիկ Ս. Նախագահին ֆէ՛ի բեմն եկն և ֆէ՛ անտի լ՛էն ահա ծափերու ուժ-

գին և երկարաձիգ ոտանաւոր կ'ողջունեն հանդիսավարը։

Ժամն ըստ Թրքաց՝ իրիկուան գրեթէ տասն երկուքն է։ Ս. Գահերէցն իւր հայրապետական պահպանիչովը կ'փակէ հանդէսը։ Ուսանողք մարմնամարզի կ'սկսին։ Անդ յորդէ բազմական պրոհը։ Հանդիսական բարձրաստիճան Ս. Հարք և աւագորեար Տիարք Տնօրէնին իշխանատան սրահը կ'ջեղուն։ Անդ մեծապատիւ կ'մեծարուին։ Վերջալուսոյ ճառադայթից հետ՝ անձնիւր հանդիսական կ'մեկնի իւր մայր–տուն, իմացական խրախճալիր խնջոյքէ մը կամ դաշափարաց տիեզերքներու մէջ զբօսանալոյ մի վերադարձողի հոգեզմայլ յակինեներովը թռչելով։

Կ. Պոլիս 5 Օգոստոս։ ՕՇԻՆ

ՀԱՆԴԷՍ

ՄՐՑԱՆԱԿԱՐԱՁԱԾՈՒԹԵԱՆ

ԻԶՄԻՐԵԱՆՑ ԿՏԱԿԻ

Իզմիրեանց կտակի զործադիր և մնայուն Պատ. Յանձնաժողովին կողմէ պաշտօնական գրութեամբ խնդրուած լինելով, ըստ փափաքանաց կտակարարին, Սրբոց Թարգմանչաց տօնին օրը կատարուած մրցանակաբաշխութեան վերաբերեալ տեղեկութիւններն հրատարակել, խմբագրութիւնս արժան կ'համարի անոնց կարևոր մասերը նշանակել։

Այս հանդէսը կ'կատարուի Աղդ. Ժողովոյ Նորակառոյց սրահին մէջ՝ ի ներկայութեան Իզմիրեանց կտակի Պատ. Յանձնաժողովոյ մի քանի անդամոց և ակնդեսեալ կանանց, վարչային, ու ուսումնական պատկառելի խմբի մը, ընդ նախագահութեամբ Գեր. Տեղապահ Սիմէոն Սրբազանի։

Ի պիտոյ Պատ. Յանձնաժողովոյ Տեղեկաբեր Աբժ. Յովհ. Մկրեան կ'կարդայ Տեղեկագիրն։

Սոյն Տիզնկապրին նայելով՝ մրցման ներկայացուած գործերն են.

Ա — ՀԱՑՈՑ ԳԻՐՔ երկը, աշխատութեամբ Լինայի համալսարանի փիլիսոփայութեան կանոխատաս Պ. Իսահակի Ցարութիւնեանց։

Բ — ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՊԱՐՍԿԱՀԱՑՈՑ 1600 ՀՆ 1880 ՏԱՐԻՆԵՐՈՒ, գործ Պ. Վրթ. փափազեանցի։

Գ — ԱԳՈՒԼԵՑԻՈՑ ԲԱՐԲԱՌԸ, Ջուխէ ընդ., 1882 ին տպագրուած, գործ Պ. Ս. Սարգիսեանցի։

Դ — ՀԱՑԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔ, Պ. Ցարութիւն Մելքոն Տէտուխեանի գրած գործին Ա. մասը։

Ե — ԽՈՌՆ ՆԱՄԱԿՆԵՐ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ, տպագրեալ գործ Մեծ. Կ. Ղազանճեանի։

Զ — ՈՒՍՈՒՄՆ ՀԱՑՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ, ձեռագիր հեղինակութիւն Մեծ. Մարկոս Ազաթէդեանի։

Բարեյաջողութեամբ կատարարին որոշած տրամադրութեանց համեմատ՝ Դ և Զ գործերն անհատական, Գ տպագրութեան թուականն երկու տարին անցուցած և ե, որոշեալ նպատակին անհամապատասխան լինելով՝ մրցման անյարմար կ'դատուին, և հետևապէս միայն Հայոց Դէն և Պաբկհայոց Պատմութեան արժանի համարուելով, առաջինն կ'յանձնուի ի քննութիւն Բրօֆէսօր Պ. Պատկանեանի՝ որ կ'հրաժարի այդ պաշտօնէ անձնական տկարութիւնն առարկելով։ Ուստի նոյն գործը կ'յղուի Դեր. Տ. Մաղաքիա եպիսկոպոսի, որպէս զի Էջմիածնայ ձեռնարկի պատ. ուսուցչական մարմնոյն հետ քննադատութեան ենթարկէ։ Իսկ երկրորդ գործն կ'յանձնուի Աստուածաբանութեան ուսուցիչ Պ. Թորոս Ջուղայեցւոյն։

Դեր. Օրմանեան հետևեալ քննագիրը կ'հաղորդէ պատ. ընտիրժողովին.

Վեհապատիւ Ատենապետ

Գործադիր մեծարուն ընտիրժողովոյ Ցովսէփ-Իզմիրեանց

կաթող. ի Կ. Պոլիս

Ապրիլ 2 Թուակիր պաշտօնագրովդ կը յանձնարարէր ինձ, Պ. Իսահակ Ցարութիւնեանցի «Հայոց դիրը» մակագրեալ ձե-

ռազիր երկասիրութեան վրայ ստանալ Մայր Աթոռոյս Հոգևոր Ձեմարանի ուսուցչական մարմնոյն կարծիքն՝ Ցովսէփ-Իզմիրեանց կտակով հաստատուած Սահակ-Մեսրոպեան մրցանակին ոգւոյն և նպատակին համեմատ, և փութացնել առ այդ պէտք եղած յայտագիրը:

Թէպէտ պաշտօնագիրը ստացած էր ապրիլ 16ին, այլ Պ. Ի. Ցարութիւնեանցի ձեռագիրներն հազիւ մայիս 17ին հասան, և հետևաբար յապաղեցաւ Ընտրութեան սպասած յայտագիրը:

Պատուարժան ուսուցչական խումբը վերոյիշեալ երկասիրութեան վրայ մասնաւոր քննութիւններէ յետոյ, ի միասին դումարուելով կարծեաց փոխանակութիւններ կատարեց, և այդ դումարմանց մասնակցեցան մեծայարգ ուսուցչք, Ա. Նահապետեան. տեսուչ. Մ. Պալեան, Ս. պալասանեան, Կ Կոստաղեան, փ. վարդանեան, Ս. Տէր Գաբրիէլեան և ստորագրեալս:

Պ. Ի. Ցարութիւնեանցի երկասիրութիւնը վեց տետրակներու մէջ 428 մանր էջերու վրայ գրուած է, առանց հաշուելու ծանօթութիւնները՝ որք վկայութեան բերուած հեղինակներուն խօսքերն ու խօսքերուն տեղերը կ'ցուցնեն: Գործն ունի յառաջաբան մը, և բաժնուած է երկու մասերու, առաջինն՝ երեք և երկրորդը՝ տասը գլուխներով: Յառաջաբանին մէջ կ'բացատրէ իր գործոյն նպատակն, որ է Հայոց գիրերուն դիւտն կամ ծագման խնդիրը լուծել, յառաջաբանը կ'հասնի մինչև 34 էջը: Առաջին մասը նուիրուած է ամբողջապէս լեզուի վրայ ընդհանուր տեսութիւններու, որք կ'շարունակեն մինչև 213 էջն: Երկրորդ մասին առաջին երեք գլուխները գիրի վրայ ընդհանուր տեսութիւններ կուտան, և կը հասնին մինչև 147 էջը: Ցաջորդ չորս գլուխները կը պարունակեն Կորիւնի և Խորենացւոյ և Փարպեցւոյ պատմութիւններուն քաղուածն և բաղդատութիւնն և կ'հասնին մինչև 303 էջն: Ուրիշ երկու գլուխներու մէջ ամփոփուած են զանազան գիտնականաց կարծիքներն Հայոց գրի մասին, և կ'հասնին մինչև 360 էջն: Վերջին գլուխը կ'պարունակէ հեղինակին կարծիքը, որ կ'ըսէ թէ «Հայոց հին այբուբենը ծագում է փիւնիկեան տառերից». և կ'իմանայ ոչ թէ միջնորդական այլ անմիջական ծագում:

Պ. Ի. Ցարութիւնեան անխոնջ ջանիւք աշխատած է իւր ձեռքը գտնուղ բազմաթիւ Գերմանացի և սակաւաթիւ Գաղիացի հեղինակներու գործերէն քաղել նախ լեզուի և գրի վը-

բայ պետական տեղեկութիւններ, որք կարող են շատ հետաքրքրութեամբ կարդացուիլ, սակայն չէ էական՝ այլ սոսկ ամբողջացուցիչ մաս մը կ'կազմեն «Հայոց դիրը» մակագրեալ յատուկ երկասիրութեան կամ մենագրութեան. և հեղինակին աշխատութեան ճիշտ կէսն անուղղակի միայն կ'ծառայէ իւր նպատակին: Այդ հատաքածոյն՝ թէպէտ նոր բան չը պարունակեր, և թէպէտ հեղինակին խոստովանութեան համաձայն՝ անդրնիայի հեղինակներու տեսութիւնները կ'պակսին, սակայն մեր ազգին մէջ այդ տեսակ աշխատութեանց սակաւութեանը պատճառաւ, կարող է հայ ընթերցողներու համար հետաքրքիր լինել:

Հայ պատմագրաց պարունակութեան բովանդակութիւնն և բաղադատութիւնը՝ յաճախ կրկնուած բաներ են, և Պ. Ի. Յարութիւնեանց զանազան հեղինակներու մեկնութիւններն իրարու բաղադատած առեն, նոր և սեփական տեսութիւն մը չտալեցներ:

Գիտնականներու կարծիքներուն հատաքածոյն ևս՝ թէպէտ հետաքրքրութեամբ կը կարդացուի, այլ նոր հեղինակութիւն մը լինելու հանգամանքը չունի:

Կը մնայ վերջին գլուխը· այլ դժուարին է հաստատել թէ Հայոց գրին ծագման խնդրոյն՝ Պ. Ի. Յարութիւնեանցէ տրուած լուծումը համոզողական փաստերով զօրացեալ լինի· որովհետև հին արձանագրաց լեզուներուն վրայ պատասխան կը յայտնէ՝ սոսկ փորձական ոճով և մասամբ կամայական ենթադրութիւններով:

Այդ տեսութեանց վրայ հիմնուելով ձեռնարկեալ ուսուցչական մարմինն կը կարծէ թէ Պ. Ի. Յարութիւնեանցի «Հայոց Գիրը» մակագրեալ աշխատութիւնը, վերջին գլուխը դուրս առած, աշխատալի և օգտակար և դովելի գործ մըն է, որոյ ընթերցումը կարող է մեծապէս հետաքրքրել հայ ընթերցողները· իսկ բոլորն ի միասին՝ ինքնուրոյն և սեփական երկասիրութիւն մը լինելու պայմանները չկրեր, և մակագրին մէջ նշանակուած հետաքրքրական խնդրոյն լուծման նոր լոյս չընծայեր:

Անդադան, այսինքն մայիս 31ին հասաւ ձեռքս Պ. Ի. Յարութիւնեանցի աշխատութեան երկրորդ տետրը, որ 70 էջերու մէջ կը պարունակէ յաջելուածական տեղեկութիւններ, Հայոց գրի դիւտի ժամանակին և տեղւոյն, վրաց և Աղուանից գրերուն, Հայոց գրի տեսակներուն վրայ, և «Գրականութիւն»

մակագրի ներքև կը բերէ գործոյն մէջ չինուած գիրքերուն ցուցակը։ Յաւելուածներուն ընթերցումը չփոխեր յառաջագոյն յայտնուած կարծիքը, մանաւանդ որ այդ յաւելուածները առաջինին զատ, պարզ ծանօթութեանց պարունակութիւնն ու ձևն ունին, և՝ Հայոց գրին ծագումը լուսաւորելու չեն ծառայեր։

Այդչափ ինչ համառօտակի պատասխանելով ի կատարումն Ձեր յանձնարարութեան, յարգանաց հաւաստեօք Մեծ. ուսուցչաց և իմ, եմ Ձեր վսեմութեան և ցանձնաժողովոյդ

ի Ս. Էջմիածին — Մեծայարդ Անդամս Աղթամարայ

յՅ յունիսի 1888 ամի — ՄԱՂԱԳԻԱ ԵՊԻՍ. ՕՐՄԱՆԵԱՆ

Պատ. ցանձնաժողովը Սահակ-Մեսրոպեան մրցանակին այս 1888 տարւոյն համար, արժանի կ'համարի ՀՕՑՈՑ ԴԻՐՔ, և կ'նուիրէ հեղինակին 600 րուբլի, յանուն բարեյիշատակ իմաստասիրի, և կ'որոշէ տպագրութեան գործն անօրինել հեղինակին հետ ըստ տրամադրութեանց կառավարչի և կեդրոնական վարչութեան հրահանգի։

Իսկ Մեծ. Թ. Ջուղայեցի աստուածաբանն սոյն Դոռոթէը կ'հաղորդէ Պատ. ցանձնաժողովին.

Առ Վսեմափայլ
Պարբրիէլ Ներսիսեանկեան Լիչնոի
ի Ներս.

Տէր,

Ձեր Վսեմութեան 23 փետրվարի դրութիւնն ստացայ, զոր գրած էիք ի դիմաց ցանձնաժողովոյն Սահակ-Մեսրոպեան մրցանակաբաշխութեան, որով կը յանձնէք ինձ փոփոխեանց Պ. Վրթանէսի երկասիրութիւնն ի քննութիւն։

Նախ պիտի խոստովանիմ որ ես՝ թէև Ջուղայեցի, իմ հայրենեաց պատմութիւնն յատկապէս և ի մասնաւորի չեմ ուսումնասիրած. միայն թէ ինչ որ պատահմամբ ձեռքս անցել է Ջուղայու վերաբերութեամբ կարդացել եմ, և մեր տեղային աւանդութեանց հետ ես փոքր ի շատէ ծանօթ եմ։ Ուստի իմ դիտողութեանց համար կատարեալ անվրիպութիւն ամենևին չեմ պահանջեր։

Պարոն Վրթանէսի գրուածոյն մէջ բան չը գտայ որ մեր ընկալեալ աւանդութեանց հետ անհամաձայն լինէր։ Կարող եմ այս աշխատութիւնը նկատագրել իբրև Ջուղայու պատմութիւն

ինչպէս որ մինչև յայժմ աւանդեալ և ընդունուած է Նոր–Ջուղայում։ Ըստ իս՝ այս երկն մեր դիտեցածը Ջուղայու մասին չի յաւելցնել, այլ այդ գիտութիւնն ժողովրդեան մէջ աւելի դիւրութեամբ կը տարածէ։ Պարոն Վրթանէս մի նոր բան չունի պատմելու, մի այնպիսի տեղեկութիւն չի տար մեզ Ջուղայու վերայ զոր իւր նախորդք արդէն առած չը լինին։

Թէպէտ անկասկած ընթերցողն պէտք էր հետևել թէ Պարոն Վրթանէս անձամբ Ջուղայու թանգարանն քննած է և Ջուղայեցւոց կեանքն անդէն և անդ ուսումնասիրած է, սակայն մի տեղացւոյ դատաստանն՝ այդ չի կարելի լինել։ Կարող եմ մեծ վստահութեամբ ասել որ Պարոն Վրթանէս Ջուղա տեսած չէ, ուրանալով որ իւր աշխատութեան մէջ հագիւ թէ մի քանի նկատողութիւնները դտնուին զոր Միրզա Յարութիւն Տէր–Յովհաննիսեանց իւր ընդարձակ Ջուղայու Պատմութեան մէջ չիշած չը լինի։

«Պատմութիւն Պարսկահայոց» չեմ կարող դիտութեան կամ հնախուզութեան մեծ արդիւնք համարել, քանզի ցարդ երևացած Պարսկահայոց պատմութեանց ոչ կատարելագոյնն կրնայ տեպուիլ այդ երկը, ոչ ևս հեղինակն պատմական մի նոր կէտ երևան կը հանէ կամ կը լուսաբանէ։

Հեղինակի գլխաւոր, եթէ չասեմ մի միայն, աղբիւրն Միրզա Յարութիւնի վերոյիշեալ պատմութիւնն է եղած, և շատ անգամ յիշուած ձեռագրաց և Ջուղայու մէջ գտնուած յիշատակարանաց վկայութիւնք ոչ թէ հեղինակի առանձին հետազօտութեանց և խուզարկութեանց արդիւնք է վարկանելի, այլ Միրզա Յարութիւնի պատմութենէն ընդօրինակութիւնք են, ինչպէս որ արդէն Արժ. Տէր Յովհաննէս Մկրեան ի լուսանցս գրոց նշանակած է։

Սակայն և այնպէս Պարոն Վրթանէսի գրուածն իւր յատուկ արժէքն ունի, և արժանի է ամենայն քաջալերութեան. Ազգիս գրականութեան մեծ պակասութեանց մին կարելի է համարել առաձեռն դիւրամատչելի և արժանահաւատ պատմական գրեանք։ Պարոն Վրթանէս աւասիկ այս պակասութիւնն Ջուղայու նկատմամբ Աբրահամեան բարբառով կը լցունէ։

Մեծաւ յարգանօք մնամ

9 Մարտ 1888 — Վսեմաշխարհութեանդ նուաստ ծառայ

ի Կ. Պոլիս. — ԹՈՐՈՍ ՋՈՒՂԱԵԵՑԻ

Աղբատաբանասէրների վարպետ։

Պատ. Ցանձնաժողովի Տեղեկագրի ընթերցումն ետք՝ Գեր. Գարեգին Սրուանձտեանց կ'խօսի, ուրախութիւն կը յայտնէ հանդիսին մէջ այնքան պատկառելի և ընտիր անձինք տեսնելով, և կ'ըսէ.

«Մայրենի լեզուին, հայկական գրոց և գրագիտութեան մեծ հեղինակաց, Սրբոց Սահակայ Պարթևին և Մեսրոպայ Հայոց եկեղեցւոյն ուսին, այսօր Հայաստանեայց Եկեղեցւոյ և Ազգին ջուխտակ արևներուն ծագման և լուսաւորութեան պայծառ յիշատակին օրը, դեղեցիկ զուգադիպութեամբ եկած ենք նոյն սրբազան անուանց նուիրեալ կտակի մ'արդիւնքը վայելել»:

Ապա կ'օրհնէ Ց. Իզմիրեանցի յիշատակին, բարեբար՝ որ իւր գանձէն բաժին հանեց Ազգին, կ'հռչակէ զայն անունման և անմահ. ընորհակալիք կ'յայտնէ Ս. Նախագահին և վաճառ. վարչապետին, Պատ. Ցանձնաժողովին որ կատարին անապատ դործադրութեան հաւատարիմ կ'գտնուին, և իրենք իրենց և Իզմիրեանցի պատիւ կ'բերեն. ի վերջ կ'մատղէ յերկնից որ Իզմիրեանցի նման բարերարներ շատնան Ազգին մէջ, չմոռնալով օրհնել նաև այն բարերարներն որ օգտակար գործով և նուէրներով եղած են յիշատակ արժանի և օրինակ նախանձելի:

Ապա հետև խօսք կ'առնու Խրիմեան Սրբազանն որ ոչ միայն իր գոհունակութիւնը կ'յայտնէ Պատ. Ցանձնաժողովին աշխատութեանց համար, ոչ միայն կ'օրհնէ Իզմիրեանցի յիշատակին այլ և դիտողութիւններ կ'ընէ.

«Կը տեսնէք, կ'ըսէ Հայրիկ, թէ որքան դժուար է գրիչ առնել և գրել. գրելն ուրիշ աշխատութիւններու չնմանիր, մանաւանդ չնորհք պէտք է. շատ մը յատկութիւններով օժտեալ լինելու է մարդ որ կարենայ գրել, և այդ չնորհքն, այդ յատկութիւնները քիչերու, շատ քիչերու տրուած է: Ս. հաւատիկ մէջ տեղը դրամ կայ, քաջալերութիւն պիտի տրուի, և սակայն կը դիտէք թէ որքան քիչ են անոնք որ բան մը ներկայացնելու համարձակութիւն կ'ունենան, և կը տեսնէք որ այս տարի Թուրքիոյ Հայոցմէ ոչ օր մրցանակի բաժին մը ունեցաւ: Մեղք կ'այդ տղան ալ, այդքան աշխատութեան դէմ վարձատրութիւն մը, փոքրիկ բան մ'ալ ինք առնէր: Յոգներ է, աշխատեր է,

աչքի լոյս թափեր է. ինչո՞ւ բոլորովին անտես ընել դինքը։ Գ. Զուզայեցին կ'ըսէ թէ ուրիշ պատմադրի մը գործերէն օրինակութիւններ ըրած է. բայց միթէ ամեն պատմութիւն գրող իրմէ առաջ գրողներուն գրքերը չուսումնասիրեր, անոնցմէ վկայութիւն առաջ չբե՞ր. ասանկ քիչ մը շատ վկայութիւն առաջ բերեր է, ինչ ընաս։ Եւ յետոյ ադ գրածները եթէ շատ նոր ալ չեն, բայց ո՞վ գիտէ ադոնք. լաւ չէ՞ որ ադոնք տարածուին մեր ժողովրդի մէջ ալ, և ժողովուրդն ալ սորվի։ Եւ սա ալ կայ որ, տեղագրական նկարները, պատմական գրութիւնները միշտ նոր բաներ չեն. ընդհակառակն, ինչ որ կայ ան պիտի գրէ, և եղածներն ալ բնականաբար հին բաներ են. ասոր համար, ինչ կ'ըլլար, պզտիկ բան մ'ալ ան տղուն տայիք։ — Այսու հանդերձ ինչ որ դուք որոշում տուած կ'ք, տրուած է, և անշուշտ դուք ալ ձեր մտածութիւնները ունիկիք, ես կարծիք մ'էր յայտնեցի»։

Վերջապէս քաղաքական ժողովոյ Ատենապետ՝ վսեմ Սիմոն պէյ կ'խօսի այսպէս.

«Մեր տղայութեան ժամանակն ալ կ'ըսուէր թէ Ազգին կըտակներ կ'ըլլան բայց չեն գործադրուիր, և աղոր համար կըտակ ընողները քիչ են. այդ դժբաղդ աւանդութիւնն արմատացած էր Ազգին մէջ. կտակները կը գործադրուին ոչ թէ կըտակարարին, այլ կտակատուրին կամացն համաձայն. կատակատուրը կ'ուզէր ընել լաւագոյն բան մը քան ինչ որ կտակարարը փափաքած էր, և այսպէս կտակը անօգուտ կ'ըլլար, կը մնար։ Բարեխնամատար Իգմիրեանց բաւական քաջութիւն ունեցաւ, պիտանալով հանդերձ Ազգին այս թերութիւնը, գործել կարևոր կտակ մ'ընել. բայց ինչպէս կ'երևի, հանգուցեալը պիտած էր թէ՝ նոր սկզբունքներ Ազգին մէջ սկսած են մանել և չնորհիւ այդ սկզբունքներուն կտակները պիտի յարդուին, հետևաբար առանց վարանելու իր կտակն ըրաւ։ Անշուշտ ամենքս ալ ազդովին գոհ և ուրախ պիտի լինինք որ Հանգուցեալն իր նպատակին հասաւ, չնորհիւ կտակատարաց ցանկանաժողովոյ ուղիղ դաղափարներուն և սկզբանց։ Արդարև ցանկանաժողովը բնաւ չուզեց ընել լաւագոյն քան ինչ որ փափաքած էր կտակարարն, այլ ընդհակառակն ամենայն խղճմտարութեամբ թափանցեց կտակարարին ոգւոյն, լաւ ըմբռնեց անոր կտակն, և կարող ենք ըսել թէ ամեն մէկ բառն իսկ ուշեց յար-

գնել, և ահա այսպէս խղճահարութեամբ է՝ որ երկու տարի է մրցանակները կը բաշխուին. կատարելապէս վստահ ենք թէ յայսմհետէ ևս այսպէս պիտի չարունակուի ի մեծ գոհունակութիւն Ազգին։

«Եւ ինչ հետեւութիւն պիտի ունենայ Ցանձնաժողովոյ այս ընթացքը. թողած ապատարութիւնը չատ լաւ պիտի լինի, հինաւուրց այն գէշ աւանդութիւնը թէ կաւիները չեն գործադրուիր՝ հետզհետէ պիտի ջնջուի աստիճանաբար, վստահութիւնը պիտի վերստին ծնի ամեն սրտերու մէջ, և պիտի տեսնենք թէ այդ վստահութեան չնորհիւ բարեկէր ու ազգասէր ոգիները նոր հաւատքով ոգևորուած պիտի փութան իրենց հարստութեան մէջէն բաժին մ'ալ Ազգին հանել, և ահա այսպէս Ազգը չնորհիւ բարեյիշատակ Իզմիրեանցի և չնորհիւ Ցանձնաժողովոյ իմաստուն և խոհական ընթացքին, ապագային մեծ մեծ կաւիներ տեսնելու յոյսն ունի. հետևաբար մեր չնորհակալութիւնն առ Ցանձնաժողովը պէտք է կրկնակի լինի»։

Եւ վասն Նուբեան էֆէնտի կ'ինդրէ առենախօսութիւններն հետևեալ դիտողութեամբ.

«Ձիշդ այն պահուն յորում կ'ուզենք ուղն մեր երանաչնորհ Թարգմանչաց որոց փառաց գլխաւոր սիտղոսն է մեր լեզուի պերու գիւան, նոյն պահուն կ'ալակենք գրական աչխատութիւն մը որ դարձեալ կ'վերաբերի այդ գրերու գիւտին»։

Դեր. Տեղապահ Սրբազանի օրհնութեան աղօթքովը կ'վերջանայ հանդէսը։

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԳՈՐԾԱԴԻՐ–ՄՆԱՑՈՒՆ ՑԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՑ

Յ. ԻԶՄԻՐԵԱՆՑ ԿՏԱԿԻՆ

Ցանձնաժողովս կը փութայ ծանուցանել թէ Սահակ–Մեսրոպեան Գրական Մրցանակաբաչխութեան Հանդէսն՝ զոր Բարեյիշատակ Հանգուցեալն հաստատած է Ազգային Պատմութեան և Գրութեան վերաբերեալ լաւագոյն երկասիրութեանց համար, տեղի պիտի ունենայ ի սօնին Սրբոց Թարգմանչաց ...

ուսյիկայ 1889 տարւոյ, և կը հրաւիրէ այն ամէն իմաստասէրներն որ որոշեալ նիւթ երեւն վրայ ո՛և է երկասիրութիւն ևարձ կ՚ուզեն մասնակցիլ, փութան մինչև յառաջիկայ Յունվարի սկիզբն յուղարկել իրենց դործերն առ Ա.ժեն. Արբազան Պատրիարքն, ի Կ. Պոլիս:

Տպադիր երկասիրութիւնք պէտք է որ երեք օրինակ յուղարկուին:

19 Յուլիս 1888
ի Պատրիարքարանի Հայոց
Կ Պոլիս

ԱՒ ԿՈՑՄՆ ՄԵԼԱՄԱՂՁՈՑ

ՏՂԵԿՈՒՀԻՆ

Մինչդեռ ժպտի կսկոնկն վարդ
Լինիլ ճակտիդ ու կրծիդ զարդ,
Եւ գարուն մի գուարթութեան
Ընծայել քեզ խնկովն ճամբուն
Լ՚ը դուս այդպիս մեյամախսուտ
Կաս լուռ ու մունչ՝ ձեռքդ ի ծնօտ.
Տո՛ւր ինձ գաղտնիք դժգոհ կեանքիդ,
Վարդի փոխեմ սգոյ նոճիդ:

Թուխ–վանդակին մինչդեռ սոխակ
Իւր երգերով սիրաղաշնակ
Զարթուցանէ մինչ սրտից մեր
Հոգեզուարճ հաճոյից ակր.
Դուս ատ իմմի՞ մեյամախսուտ
Կաս լուռ ու մունչ՝ ձեռքդ ի ծնօտ.
Երգի՛ ես դուս, ո՛ գեղանի,
Ծոցն իմ վանդա՛կ քեզ բի պակսի:

Մինչ այլ աչքիդ մեկ նայուածքին
Կենաց արևն ակնկալին.

Միևչ դեղձ այտիդ մի վարդ ժպիտ
Կ'արժէ բանիկ բան զամեն օժիտ:
Ծառի աչերդ Լ՞ր նուադկոտ
Փոշւոյն յառես մեյամախնամ·
Տո՛ւր ինձ վշտիդ զաղտնիք տխուր
Լինիմ սպուռնդ՝ ծծեմ ց՛մբուր:

Միևչ քո շրեդ նոճի հասակ
Եւ ճակատդ այդ յուսապսակ
Ցաղթանակէ ի յաղթանակ
Սիրարշաւել տան քեզ արագ·
Է՞ր պարտեայի պիս կաս լքուն·
Թէ պակսի մէջ կենաց կուռոյն,
Արժանաւոր քեզ մրցանակ
Սիրտս քեզ՛ զա՛ն, սէրս քիզ՝ բա՛զ:

Միևչ այլք քո գուռդ զանգուրներէն՝
Լուսափրփուռ գինչ մետաքսէ,
Իրենց կենաց երջանկութենէն
Ոսկի թելերն նիւսել տենչան:
Է՞ր դուռ գայես գինչ սգոյ քող,
Չգես դէմքիդ գեղանշող
Աստ՛ վիշտդ ինձ, կո՛յս, կեա՞ցիր ողջոյն,
Ընե՛մ մատուռ ես քո սիրոյն:

1888 Մայիս 1 ՊՈՒԵՏՆ

ԱՄԱԼԹԻԱ

(AMALTHIA)

ԼՐԱԳՐԻ ՅԻՍՆԱՄԵԱԿԸ

Յունական եղերաց վրայ յունական լրագրաց առաջադոյնն՝ Ամալթէա՝ իր յիսներորդ տարին բոլորեց անցեալ (յուլիս) ամսուն 24ին: Կոստանդին Ռուսէս՝ լուսամիտ և

ազնուական անձը դրած է հիմն այդ օրագրին 1838ին և հետզհետէ շարունակած են Ճ. Լամպրիւռ, Պ. Պէնարաօ, Պ. Վիդօրիաու և Ց. Յամիզաքի։

Ամէնէի այս երկարատև և արդիւնաւէտ կեանքն չէր կրնար անառես անցնիլ։ Լրագրական այս կիսադարեան դոյութիւնն՝ որ անչուշտ անդուլ պայքար մ'է եղած զանազան դժուարութեանց դէմ և որ կ'ենթադրէ բարոյական արիութիւն, առկունութիւն և իմացական մեծ կազմուղութիւն և չքնահայեցութիւն, հրաշխոյ կարգը կ'անցնի Ազևեզքի մէջ ուր ստէպ թերթեր ծաղկանց պէս կ'ծնին դարնան հետ և աշնան հետ կ'թառամին։ Ուստի և այս հրաշալի երևոյթն հարկ էր մեծ չքեղութեամբ հռչակել։

Հելլէն ժողովուրդն՝ ստէպ առաչնորհ իր մեծ մարդոց նկատմամբ, որ իր հին պատմական կենսոյ անչէջանելի փայլ և իմացական աշխարհին բերած են լոյս՝ որու ճառագայթներն Եւրոպայի ժողովրդոց վրայ սփռուած են, և անազան պղջմամբ կանդնելավանոնց յիշատակին արձաններ, դարերու դառն փորձառու թենէ խրատուած՝ այժմ սկսած է արժանապէս դնհատել այն մարդիկն ու հիմնարկութիւնները որ իր զարգացման նպաստած են, այնպէս որ չզլանար իր բարոյական և նիւթական ձեռնտուութիւնն այն ամեն ձեռնարկներուն՝ որ նպատակ ունին հելլէնական տարրին վերաշինութիւնն աշխարհիս մր կողմն որ դանուի, և վհանձնօրէն կ'թափէ իր գանձերն այդ նպատակին յառաջացման համար։

Եւ Ամէնէ յատկապէս յունական յառաջդիմութեան հին հերոսներէն մին, իրեն արժանի պատկը կ'ընդունի այն համակրալից և չքեղ ցոյցերու մէջ որ յերևան եկան իր Ծոբելեանի առթիւ։

Իր բարեյիշատակ հիմնադրին և վաստկի գործոն խմբագիրներուն յիշատակին համար առաւօտուն Մայր-եկեղեցւոյ մէջ հոգեհանգստեան սրտաշարժ և փառաւոր եկեղեցական արարողութիւնն կ'կատարուի Լիպիոյ և Բրիտոպօլսոյ Մետրապօլիտներու՝ Գերբ. Իզնատիոսի և Կիւրիլոսի միջոցաւ և երեկոյին չքեղ խնջոյք մը կ'պատ-

թաստուի քաղքիս անուանի Հիւկ պանդոկն։ Ոչն Հայակապ չէնքին ճակատն ու հարկերոյթի սրահը չքեղապէս պճնուած էին այլ եւ այլ գաւիններով եւ պոյնզդոյն լապտերներով։ Աբեւնակին վրայ կ'չողար 1838 — Ա֊մպիա — 1888 — արձանագիրն։ Ժամն ինն էր կոչեականներն կ'սկսին հաւնիլ պանդոկն։ Հռչակաւոր օրագրին արդի ցնօրէնն եւ խմբագիրը՝ պ.պ. Սոլոմոնիա եւ Հիւբերիա, այս մեր համակրելի, լուսամիտ եւ աղնիւ պաշտօնակիցներն, սիրալիր ընդունելութեամբ կ'պատուէին հրաւիրեալներն՝ որ յիսունի կ'հասնէին եւ ասոնց մեծագոյն մասը կ'կազմէր քաղքիս գրեթէ բոլոր խմբագրական խումբն։ Կային նաեւ կառավարական եւ պաշտօնական բարձրագիր անձեր, եւ Հեղինէ հասարակութեան առաջնակարգ անձնաւորութիւններ։ Իսկ Հայոց կողմէ կ'գտնուէին՝ անուանի եւ քաջախօս վաստաբան՝ Մեծ Գ. Պաւլի Եֆէնտի, եւ Ա. Մոշխ խմբագիրը՝ Պ. Մամուրեան։

Խնջոյից սրահն յոյժ խորհրդաւոր եւ վայելուչ կերպով զարդարուած էր։ Փառաչուք Սուլթան Մահմուտի, որու օրովն առնուած է Ա֊մպիի հրամանագիրն, վեհափառ Սուլթան Համիտ խանի եւ Եղլադոյի վեհ. Գէորգ թագաւորի պատկերներն գաւինզարդ կ'երեւէին սրահին ճակատն, ինչպէս նաեւ հիմնադրին՝ Ռօտէսի եւ Սամիօգաքիի լուսատիպ նկարները։ Ձոխ եւ համադամ ճաշէ մը ետք՝ սկսան տաղանդաւորներն եւ ճառերն եւ շամբանիայի լիուլի բաժակներ պարպուեցան վեհ. կայսեր, Ա֊մպիի հիմնադրին եւ արդի խմբագիրներուն կենաց։

Անկարելի է մի առ մի յիշատակել, թո՛ղ թէ տպիտալ, տաղանդաւորներն, որ այնքան խմաստալից եւ վառվռուն էին, որքան որ ամենուն աչքին մեծ էր անկեղծութեան ամեն զգալի ցոյցերով չնորհաւորել եւ հրաշակել Ա֊մպիի յիսնամեակն, եւ քաջալերել ու բարձրացնել արդի խմբագիրներն՝ որ իրենց յաւուրկ աշխուատութեամբն ու համեստութեամբն սրտագին եւ սրտայոյզ չեշտերով կ'պատասխանէին համակրական ցոյցերուն եւ ծափահարութեանց։ Խօսքցան նաեւ նախ՝ Ա. Մա-

Ֆ.ց խմբագիրն և տպա Մեծ. Պուպլի Լիլնաին, Փրանսեբէն լեզուաւ, առաջինն չեշտելով Ա.մ.ն.ի փրկաւէտ ազդեցութիւնն և պատուաբեր դիրքն, երկրորդն իր պերճաբան լեզուով նկարագրելց մամլոյ մեծ նպատակն, ներպործութիւնն և խնացական ու բարոյական զոհաբերութիւններն, և յատկապէս դրուատելց այն խնդարհամառութիւնն որով մեծ, հանճարեղ մարդիկ ատեպ անշուք և անանուն կ'անցնին լրագրական ասպարէզին յաւիտենական սահմանն, թողլով սակայն լուսածին սերմեր որ ապագային մէջ կ'բեղմնաւորին, ինչպէս և բեղմնաւոր հունձք ունեցած է և Ա.մ.ն.ի: Ա. Մ.ց խմբագրութիւնն կ'մաղթէ այժ և ղօրութիւն իր աշխուժ պաշտօնակիցք՝ Ա.մ.ն.ի Ցնօրէն և խմբագիր Պ. Սալմանեանի և Պ. Հիւրիւդի որ անդադրադրձ չարունակեն իրենց պաշտօնն և նոր յիշատակներ բոլորել տան իրենց օրագրին:

ՆՈՐ ՊԱՏՐԻԱՐՔՆ Ո՞Վ ՊԻՏԻ ԼԻՆԻ

Մեր նախորդ թիւրթով համառօտակի դծած էինք այն կարևոր յատկութիւններն որոց պարտի տէր լինիլ պատրիարքական պաշտօնին կաշուելիք եկեղեցականն, առանց մեր կողմէ ընդելի մը ցոյց տալու, այն վստահութեամբ, որ դոնէ այս անգամ մեր ժողովներն կշռելով արդի փափուկ և ծանր վիճակին՝ որու մէջ կ'գտնուի Ազգն, վերջ կ'տան՝ այս հանդիսաւոր պարագային մէջ՝ ամեն անձնական և օտարամուտ նկատումներու, և կ'ջանան ընտրել այնպիսի անձ մ'որ Ազգին պիտոյից հմուտ և տէրութեան առջև վստահելի լինի:

Արդ՝ մայրաքաղքէն մեր առաջ ախուր լուրերն մեր այս վստահութիւնն ի դերև հանել կ'թուին, վասն զի հակառակ այնն կատարեալ թիւն մ'ամեն ապօրէն միջոցնե-

բու կ'ղիմէ եղեր որպէս զի ցարդ իր ձեռքն ջնջէ եղող Պատրիարքի մը շնորհիւ վայելած աղդեցութիւնը չկորնչցնէ և իր նպատակը չէ, յառաջ գնէ։

Վարչային մարմիններէն իրենց պարտքը կատարեցին, ցոյց տուին պատրաստուած ցանկերու միջոցաւ թէ ո՛ր ընտրելին աւելի յարմար կ'դատեն։ Կ'մնայ այժմ Ազգ. ժողովին կատարել իր պարտքն՝ և լոկ Ազգին ապագայ անդորրութիւնն ու զարգացումն աչաց առջև ունենալով՝ գործել, և չէ թէ այս կամ այն կուսակցութեան կամ ոչ իշխանութեան մը հաճելի լինելու համար . . . ։

Պատրիարքարանէն մեզի մեր մի թղթակցին հետևեալ բրբռալուժ դրուագները այս անգամ կ'հրատարակենք, առանց սակայն անոնց արտայայտած ինչ ինչ կարծեաց համաձիտ լինելու։

ԱՒԺՄԱՆՆԵՐ Ի Կ· ՊՕԼԻՍ

Պօլսոյ այժմեանները են Պատրիարքարանները։ Ընթերցողք դիտեն թէ ինչպէս կ'ընտրուին Պօլսոյ հայ պատրիարքներ։ Պատրիարքի հրաժարումն կամ անկումն կետոյ, վարչութիւնէ կ'ընտրուի Պատրիարքական Տեղապահ մ'որ Պօլսոյ բոլոր կրօնականները յատուկ հրաւիրագրերով կ'հաւաքէ ի Պատրիարքարան և կ'կազմուի ժողով մի Համագումար։ Սորա պաշտօնն է Թուրքիոյ հոդին վրայ գտնուղ բոլոր Եպիսկոպոսաց ցանկն յօրինել և ապա քուէարկել։ Քուէարկեալ Եպիսկոպոսաց ցանկը կ'ներկայանայ Քաղաքական ժողովոյ, որ Համագումարին քուէից համեմատական մեծամասնութիւնն չահոդներլն հինգ պատրիարքական ընտրելի կ'արձէ։ Այս հինգ անուն ցանկը կ'ներկայանայ Ազգային ժողովոյն, որ անոնցմէ մէն քուէից բացարձակ առաւելութեամբ կ'ընտրէ և կ'նշանակէ ՊԱՏՐԻԱՐՔ։

Դիտողութիւն. — Համագումարը սահմանադրական սխալ մը գործեց երբ իր ցանկէն դուրս ձգեց Թուրքիոյ հոդին վրայ գտնուղ Ակիմարայ և Սիսի եպիսկոպոսաց անունները։ Զի անոնք Զինաստանի և Սիպերիոյ մէջ չէին, քանի որ այսօր Սիբիրիի հոդին վրայ գտնուղ եպիսկոպոսը և Դանուբեան Հայոց Առաջնորդ Նար-Պէյն ընդունած էր ցանկին մէջ։

Դիպուածքին. — Համազումարին քուէից բացարձակ մեծամասնութիւնն որ եպիսկոպոսը չահի, ի կթձականին՝ բոլոր եպիսկոպոսաց մէջ՝ Պատրիարքութեան աթոռին ան կ'համարուի. նոյնպէս ի տաղտկականին՝ Պատրիարքութեան Աթոռին ան եպիսկոպոսն է, որ ֆաղաքական ժողովոյն ցանկին գլուխը կ'անցնի: Այս երկու ժողովոց ցանկերուն գլուխն անցած է՝ չհեղով Համազումարին և ֆաղաքական ժողովոյն քուէից բացարձակ մեծամասնութիւնը՝ Պրուսայի Առաջնորդ ԲԱՐԹՈՒՂԻՄԷՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍը: Ըսել է որ Պօլսոյ Պատրիարքն այն պիտի լինի:

Դիպուածքին. — Աբեղէ՝ ֆաղաքական ժողովոյ ցանկը խարդախած է. զի ազգային միւս բոլոր լրագրաց պէս պրարմուղիմէոս առաջին ընտրելի հրատարակելու տեղ՝ իւր ընթերցողաց ջերմօրէն ընտրելի ներկայացուցած էր: Այս պաշտօնական աննեղութիւն պատրանքն եթէ չվերացրենք այն իրողութեան թէ՝ ֆաղաքական ժողովոյ Ատենադպիրը միանդամայն պետն է Աբեղէի Վարչական Խորհրդոյ, ղէթ կրնանք մտաբերել որ Սմմաեան էֆէնտի կարգացած է Էջմիածնայ Սինոդին առ Ռուսիոյ Ցարն ներկայացուցած Կաթողիկոսական վերջին ընտրութեան բուն պատճէնն՝ որ վերջերս ի Պատրիարքարան հասած էր, և որոյ մէջ գրուած է Մակ–Արիսոն Առաջին կաթողիկոսական ընտրելի և Աբ–եպիսկոպոս ա ոսկեփառ . . . իսկ բուն Կաթողիկոսն՝ Ամեն. Մելքիսեդեկ Արքեպիսկոպոսը երկրորդ և լոկ եպիսկոպոս նշանակուած է. և այս աղտագաւ տեղեկագրով Ցարն իսկ խաբուած և Առաջինը վաւերացուցած է. Պօլսէն ալ առ այս թելադիր ունենալով յաւելուածոյ ցուցակ մը: Ինքն ևս այդ նախընթացէն դաս առնելով ֆէյ մ'ըրած կ'թուի պատրիարքական առաջին ընտրելին չորրորդ հրատարակելով յաջողիլ աչքին փուշ երևցող Բարթուղիմէոս Սրբազանին պատրիարքութիւնն իւր ընթերցողաց ալ անարժան կամ անկարևոր ցուցնելու: Արդ ահատելի փորձ, չըսենք փորձանք:

— Ոչ միայն Համազումարն ու ֆաղաքական ժողովը Բարթուղիմէոսեան են ցարդ, այլ և Պօլսոյ ազգային, պետական և օտարազգի մամուլն ալ Բարթուղիմէոսեան է, բաց ի Աբեղէէն և Մասիսէն: Հաճելի է բացատրել պատճառն: Մասիսէն աւելի բևեռային աստղ պաշտողներն այսպէս կ'վարուին: Իրաւ է թէ մենք Պատրիարքը կ'ընտրենք մեր Ազգին համար և ամեն այլ հանդամանքէ և դիտութենէ աւելի ազգային հանդամանաք օժտեալ լինելու է, և սակայն յայտնի է նաև թէ մեր Պատրիարքն

անկախ դիրք մը չունի։ Մեր Ազգ· Սահմանադրութիւնը կ'ըսէ թէ՝ Ազգին և Տէրութեան շահերը նոյն են։ Ըսել է այն Տէրութիւնն որուն հպատակ ենք և որոյ հովանւոյն ներքև ապաստանող Հայքս և եթ, ուրիշ ո և է տէրութեան ներքև ապաստանող Հայերէն աւելի կրցած ենք պահել մեր ազգային ինքնութիւնը, մեզ չհակիրճ է։ Եւ քանի որ մեր ազգային և միջազգային բոլոր գործերն ալ մեր Տէրութեան միջոցաւ միայն կրնանք կարգադրել, ըսել է մեր ընտրած Պատրիարքը Ազգին հաճութեան և վստահութեան հաւասար մեր Պետութեան ալ հաւանութեան և լիակատար վստահութեան արդէն արժանացած ըլլալու է։ Արդ՝ Պոլսոյ կառավարական թերթերը, Թարէ՛ որ կէս պաշտօնական է, Լա Թէ-ըէ՛ որ գրեթէ ամբողջ պաշտօնական է, նոյնպէս Սաադէթ, Թէրճիմանը Հաղիգաղ, Սէրվէթ, որք օսմանեան մամլոյն առաջնակարգ ներկայացուցիչներն են, Բարթուղիմէոս Սրբազանը թէ առաջարկեցին իրեւ Պատրիարք, և թէ այլ և այլ հանգիպի յօդուածներով հասկցուցին թէ՝ Ազգին կրօնականաց և քաղաքական ժողովոյն հետ, կառավարութեան ալ հաճելի և վստահելի միակ պատրիարքգուն Պրուսայի Առաջնորդն է։ Եւ մենք մեր այս տողերուն վրայ հրաւիրելով Ազգ· երեսփոխանաց խորին ուշադրութիւնն, տարակոյս չունինք որ ընտրեսփոխանութիւնն ևս նպաստաւոր համակրում մը գոյացուցած են այս ընդհանուր պաշտօնական և անպաշտօն յայտարարութեանց առջև։ Պոլսոյ եւրոպական մամուլն ալ, Ֆոր, Սթամպուլ, Լէվընթ, Մէնէրեօք և յոյն մամուլը նմանապէս Պրուսայի Առաջնորդն ամենէ յարմարը կ'նկատեն Հայոց պատրիարքութեան։ Միջազգային մամլոյն հաւանութեան ճայնն ալ իր կշիռն ունի։

Ուրեմն Ազգին շահն, արդի վիճակն, Տէրութեան վերաբերն և միջազգային կարծիքը միաճայն կ'հռչակեն Պատրիարքական գահուն արժանի Բարթուղիմէոս Սրբազանը, և Ազգ· ժողովն՝ ի նկատի առնելով նաև Ազգին համակրութիւնն առ Պրուսայի Առաջնորդն, պիտի ընէ իր ընտրութիւնն, որպէս զի տակի չըտայ անակնկալ չիմութեանց։

* * *

ԴԵՐ· ՄԱՏԹԷՈՍ ԻԶՄԻՐԼԵԱՆ

Երկրորդ պատրիարքգուն է նաև հին Հիւքսսներու և Մէմ-ըլքներու աշխարհին Առաջնորդը։ Ո՞չ ոք կարէ ժխտել նորա

պատրիարքական արժանիքը։ Կանխահաս էր այն։ Ապագայ, և ո՛չ ներկայ պատրիարքը։ Ներկային մէջ՝ ինքն քան զմեզ անմեռնին քաջ գիտէ թէ՝ հակաւակ՝ իր և ամենուս ըղձից՝ չ'կարէ լինել պատրիարք առաժմ։ Գլխաւորապէս՝ յոյժ փափկութեամբ նկատելի երկու պատճառներով։ Նախ Պոլսոյ պատրիարք մը, նէ միաճնայ կաթողիկոսին փոխանորդ կ'համարուի։ Իզմիրլեան Սիրեւ Առաջնակարգ Նկեղեցական՝ Ազգ. ժողովոյ մէջ՝ ճեռնպահ գտնուած և Ընդհանէր Բռչնակոնը չէ ընդունած։ Ապա օրինաւորութիւնը հանդիսապէս ժխտած կաթողիկոսի մը փոխանորդութիւնը ընել, ներելի և կարելի չէ մարդու մը՝ որ սկզբունքի տէր է և իւր սկզբունքն հաւատոյ հանգանակի չափ նուիրական կ'ղաւանի, որպիսի ոչ է Իզմիրլեան։ Եթէ Ազգային խորհուրդ և զործող դասուն մէջ կան, որք կ'խաչուին, բայց հակառականալ կեանքին օրական կուռքին չեն երկրպագեր, անոնցմէ մին է և Բրդայ Փարաւոնայ երկրին հայ Առաջնորդը։ Երկրորդ՝ Իզմիրլեան Արքային մին եղած է այն զօրաւոր երեսփոխաններէն, որոց հռչակաւոր ամբաստանագիրը, Հայոց Հիւանդ Հիւանդը և Վատպարկանչ Աղջիկն՝ Պոլսոյ հասան պէս պէս ֆեռմաններ ընելէ՝ վար նետեց իւր ամենակարող պատրիարքութեան անսասանելի զատնած գահէն. հարուածէ՝ որոյ ներքև դեռ կ'հեծեծեն խրիմեան և խրիմեանք։ Դնել մին պատրիարք այն Ամիրայի վրայ՝ որոյ չուրջը՝ կերպ մը ժողովրդականութիւն վայելող հրաշալեաց և զուարճաբան խրիմեան Հայրիկը պիտի պտտի ու պիտի տեսնէ գինք իւր տապալչին ոտից առջև անկանգնելի թաւալուած. — ո՛վ տղէկդ յիշատակին Ազգային անխոհեմութեանց անխոհեմութիւնն է։ Ապա ցորչափ Բռչնակոնը չէ ջնջուած և Հայրիկն ի Պոլիս է, Իզմիրլեան լաւ ևս է զեռ առաջնորդ է քան պատրիարքանայ։

* * *

ԱՐՄԱՇՈՒ ՎԱՆԱՀԱՅՐ ԱՆԸԳՆԱՆ

Պատրիարքական Բռչ ընտրելին է ևս Գեր. Աչըգեանն։ Աստուածաբան և հմուտ եկեղեցական մ'է, և սա ապաքէն չէ թէ լոկ պատրիարք՝ կաթողիկոս իսկ լինելու արժանի է, և թերևս, մի օր, մին կամ երկուքն ալ լինի։ Ի խորոց սրտի բարեմաղթութեան եմ. դի արենակից իմ է։ Սակայն իմաստասիրականին և քերթողականին նման կրօնի վարչական տաղանդ չունի։

վանք մ'իսկ՝ Պոլսոյ քովին տակ՝ երբ չկրնար կառավարել, ինչպէս պիտի կրնայ վարել պատրիարքարանը։ Յրուսց իր դէպ բնաւորութեամբ բոլոր կարող և հանճարեղ միաբաններն, որ ի Պոլիս և այլուր այսօր կարևոր դիրք բռնած և համբաւ ածած են, նմա ընդդէմ հզոր հակառակորդներ պիտի լինին։ Այն որ լոկ Նիկոմիդիոյ հեզաբարոյ Առաջնորդին հետ դէպ պըռլէն ընել չգիտեր, ինչպէս պիտի կարենայ վարուիլ Ազգին միւս Առաջնորդաց հետ։ Կենացը մէջ՝ դէռ Մխիթարեանց հետ խօսելու պատեհը չունեցողն ինչ ապահովութիւն ունի ներշնչել կրնայ թէ բարձրագոյն Դրան նախարարաց և այլ պետական անձանց հետ պիտի կարենայ վարուիլ, շահիլ և չհազորդել անոնց վստահութիւնը և համակրանքը յօդուտ ազգային գործոց և շահուց։

Աչդեանի աշխուժերը քաջ գիտնալու են թէ վանական մէյ մը վանականի մը պատրիարքութիւնը շատ մ'անտեղութիւններ ունի, մի միայն պատրիարքարանէն ուելի վանքը և Ազգին շահէն ուելի իր միաբանութեան օգուտը կ'իմորհի։ Վկայ հրաժարեալ Յարութիւն Պատրիարքը՝ և Երուսաղէմայ պարագը։

Ասոր փորձը Հայրիկն իսկ տուած է երբեմն առանց Ազգավարչութեան կարգն առնելու յաքսոր ղրկելով վարդապետներ, որք յետոյ գինքն գահընկեց ընող հզոր ամբաստանութիւններն չին եղան։ Աչդեանն ալ իր ասպատահմանագրական փորձը տուաւ։ քանի որ նշմարեցաւ Զաքէոսէ քաջառակնը ըլլն Ազգային ժողովոյն ետառանչ ոտքոցները կողմանէ դեռ չընդունուած, ինքն իրեն՝ իր ասիական հին Արձակապետ կամ վանական Տէրէպէյ մը, իբրև Ամենայն հայոց կաթողիկոս չնորհաւորած և վանքին եկեղեցւոյն մէջ ալ յիշատակած է. և երբ պատրիարքարանէն դիտողագրուած է. անսաստած է։ Վանականի պատրիարքութեան ախտը պատկերները չէ՛ին երբ Հայրիկի պատրիարքութեան օրով Պատրիարքարանն ու Պոլիսը, զզուեցնելու, նեղցնելու չափ Մշոյ, Վանայ, Վարագայ ըղէպ վարդապետներով, տէրտէսներով և իր սորդն՝ լեցուեցան։ Պատրիարք եղող եպիսկոպոսը՝ պէտք է քաղաքացի և Առաջնորդ կրօնականներէն ընտրուի։ Երբ Խրիմեան և Ներսէս պատրիարքներն դէմառդէմ բերենք ակն յայտնի կ'տեսնենք քաղաքացի պատրիարքին առաւելութիւնները։ Ապա Աչդեանին ալ՝ ոչ միայն պատրիարքութիւնը այլ և ընտրութիւնն իսկ Ազգին օգտաբեր և պատուաբեր չկարէ լինիլ։ Գանի որ, ջերմ Մակարտաչի մ'է, և

ամէն իրեն դէմ ունի հակամակարականներըը։ Մակարապետ մը՝ պատրիարք մ'է, պատրիարքական եպիսկոպոս մ'ալ Ռուս մետրապոլիտ մ'ուելի չարժեր։ Քաղաքականապէս այդ ալ ներելի չէ. պատրիարքական ոեւէ ձեւի տակ ընդունելն, ընդունել է ռուսական սա քաղաքական վարդապետութիւնն թէ՝ Ջարն՝ իբրեւ օրթոտոքս կրօնի եւ եկեղեցւոյ գլուխ՝ բոլոր Արեւելեան էքսարքներէն պատրաստ է։ Վարդապետութիւն՝ զոր Մեծին Պետրոսի պատմական կտակէն ի վեր՝ ոչ միայն Եւրոպա զէն ի ձեռին մերժած է, այլ նոյն իսկ դանուբեան ցեղով սլաւ եւ կրօնիւք օրթոտոքս աղգերն իսկ՝ կ'մերժեն այսօր։ Ուրեմն ո՛չ ազգային ո՛չ վարչական, ո՛չ սահմանադրական եւ ոչ քաղաքական տեսակէտով կրնանք պատրիարք ընտրել Աչըգեանը, որոյ աչքը կընբուն գլխաւորն է կ'ըսեն Արեւելի վարչապետ եւ Բազ. Ժողովոյ Ատենապետը Սվաճեան Էֆէնտի։

* * *

ԴՆՐ. Խ. ՄԽԻԹԱՐԵԱՆ ԵՒ Ա. ԴԵՐՁԱԿԵԱՆ

Ելեսիոյ Առաջնորդը՝ որ պատրիարքական Դրդ ընտրելին է, բնաւ տարբերութիւն չ'ունի հրաժարեալ պատրիարքէն. որ չորս տարուան մէջ՝ Ազգէն երեք հազար ոսկիներ առաւ, եւ երեք վիուլի պարծ չ'տեսաւ։ Թէեւ բարի, հեզ վանեցի կրօնական մ'է Հայր Մխիթարեան, բայց թէ հմտութանէն եւ թէ լեզուէն անյարմար է Օսմանեան կառավարութեան եւ Ազգին մէջ միջնորդ յարաբերութիւններն մշակելու համար։ Հազիւ կարժէ յիշատակել Կարնոյ նոր Առաջնորդը։ Ազգը՝ որուն պէյնէ չափ իսկ չ'կրնար կապուիլ Դերճակեան Սրբազանի հետ. քանի որ Եպիսկոպոս վիճակին մէջ՝ առ կրց լոռեբացած է։ Կարնոյ Առաջնորդութիւնն իսկ հրաչքի կարգն անցնելիք փառքը թող համարի։ Թող ջանայ իբրեւ ճարտար դերձակ՝ կարինը կարել կարկատել մոյնել տալու համար անոր հինի քակուբտուքն ու պատառուածները։

* * *

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՈՒՆԱԿԱՆԸ

Պիզմարդ ղերմանական խորհրդարանի բեմէն՝ գարեջրոյ բաժակն ի ձեռին, կ'բացագանչէը՝ բայ յԱստուծոյ և ոչ յումեքէ

վախ չունիմ կայսրութեան շահերը պաշտպանելու համար, թէև Պաթէմպէրիի անպատշաճ և անզէն իշխանէն Թիրսխէմի պէս դողդոջաց։ Իսկ մենք Ազգ. մասիս մէջ, դրիչ ի ձեռին՝ կ'դոչենք, բաց ի ճշմարտութենէ և ոչ ուժեք կ'երկնչինք։ Գիր դիտցողաց և մեզան լիզողաց մէջ առաջինն ենք յարդելու համար, Լամարդինայ թարգմանիչը. «Օրհնեալ որ սիրեն զհէգն Հայաստան չի, «Փերթ ուղ, ասա մեզ բան զհայրենեաց չի, «Վարդենիք չի և «Պանդխտի փնար չի հեղինակն, իբրև հայ Հոմէր, իբրև հայ Պօսիւէ *, հայկական կառատի մը մէջ, Հայոց գեղեցիկ դպրութեանց պատմութեան մէջ կ'ընծայենք նմա առաջին գահերէն մին։ Բայց չենք կրնար Պատրիարքի աթոռն անոր տալ։ Ազգային իշխանական չրջանակին մէջ՝ Գէլիկեան Փարողչին փառամոլութեան երկնից վերջին ամպոյն վրայ մեր ընծայելիք վերջին գահն է Կրօնական ժողովոյ Ատենապետութիւնն, քան զոր անգր ո և է գահասիրական ոգեն, գահավիժուն է և տարտարոս։ Սակայն ինչ ընելու է և ըսելու է երբ Կիպրոսի իշխանազունն անպատճառ պատրիարքանալ կ'ուզէ։ Երբ Աբեղէ և Մոռէ զայն Պատրիարք կ'առաջարկեն, երբ Ուլնիացի մը՝ զըլուխն հաւքած իրեն նման քանի մը ոչխարամիտ մարդ ամեքեն՝ զանձանակ պտըտցնող ժամկոչի մը պէս, ամեն օր խանէ խան, չուկայէ չուկայ, հանրագիր ի ձեռին՝ դաւառացի և տեղացի պարզամիտները խաբելով՝ ի նպաստ Կրօնական ժողովոյ նոր Ատենապետին պատրիարքութեան տոորագրութիւններ կ'մուրայ, որք մինչև տասն հազարն անցած են, կ'ըսուի։ Երբ ամեն խանի, տպարանի, վաճառանոցի, տանց և պաշտօնարանի մէջ, և մինչև իսկ Պատրիարքական Տեղապահի Սթոռին ոտքը կ'ձգուին նամակներ, որոց պահարանին հասցէին աեղ՝ դըրուած է, «Կարդացէք, Հայեր». տոորագրութիւնն է «Հայոց Մասնաժողովը». պարունակութեան իմաստն է «Նախ-պէսը Պատրիարք կ'ուզենք»։ Գիրն անճոռնի, չարադրութիւնը բաւական ոճաւոր։ Ժմռնամ ըսել թէ հանրագրերն ալ՝ սակաւս խըմբագրուած են՝ «Ազգին բոլոր կրօնաւորաց մէջ՝ արժանաւորագոյնը լինելով Նախ-պէյը՝ կ'ուզենք որ Ազգ. ժողովը զայն ընտրէ Պատրիարք»։ Երբ Բարիզէն ալ Բրէնս Գուիտոն մը կ'ուզենան, գրիչն ու լեզուն կ'սրէ, դիւանագիտական մարմինները յուզելու, ի նպաստ իր եղբօր գաւոին, երբ ուրիշ կողոպուչ-է,

* Փոքր ինչ կ'չափազանցէ մեր թղթակիցն, կամ թերևս գիշուհեր կ'ընէ . . . ։

Ծ. Խ.

խարեբեպել և ակնեկ այրի մ՝ալ իր նախարարաղան կրտսեր տագեր սուրբ գործոյն համար գանձ ու հրապոյր կ՝տեղայ ատ ամենուրեք, որպէս Ֆլճանդին իշխանուհին, ի պաշտպանութիւն իւր որդւոյն պուլկարական գահուն, երբ էջմիածնէն Ռուբինեան բացառականն ոսկերիներ կ՝ղրկէին ընդ դաւադրով մը կաթողական Աթոռն ի վեր էլնելու օգնողն՝ ի նշան ծանրագին երախտագիտութեան, Գալոյ պատրիարքական գահուն վրայ դաւելու համար, երբ գաղտ պաշտօնական և անպաշտօն մանանախներ կ՝կազմին, խմբագրեր կ՝կաշառուին, երեսփոխաններ կ՝վարձուին, ապազայ պաշտօնաբաշխութիւններ կ՝տակարկուին, երբ կ՝ըսեմ, այսպէս Այն գետէն, Արխ վեզագոսէն, Նէվակն, Խաներէն, կէօմրկհաներէն, վոզդաններէն, չուկաներէն, տուներէն կ՝շարժեն ոչ կ՝շարժեն ժողովներն ու ժողովուրդը և կ՝պայմանեզնեն նոցա խլեզը, կ՝նախապաշարեն նոցա կարծիքները, կ՝գնեն երեսփոխանաց քուէներն, կրօնական իշխանութիւն մը Պատրիարք ընելու համար, իրաւունք չունիմ ըսել թէ պատրիարքական նոր ոճրային մ՝է Նաո–Պէյ, որ խուժանավ մը խուժել կ՝տպառնայ Աղգին և Աղգային ժողովոյն վրայ։ Բայց այս յայտնի և գաղտնի պաշտօնական և անպաշտօն անճանց (որոց անուններն այս անգամ հրատարակելու դանց կ՝ընենք) Նաոպէյեան լարտմունք, կ՝ապացուցանեն թէ Խորէն Նաո–Պէյ բէպէրէվ Հայոց Պատրիարք լինիլ կ՝ուզէ։ Խուժանին կամ ոամկին բէզպէրէժն ընտրեալը պիկպոզէ մ՝է. Կեսար մ՝է, և մենք ինչ ենք. կրօնական հպատակ Աղգ մը, որ ունի իր Աղգային ժողովը։ Եւ այս ժողովն է որ կ՝ընտրէ Պատրիարքը։ Եւ երեսփոխան մը՝ որ խուժանին աղեցութեան տակ և անոր մղեզնութեան համար պիտի տայ իր քուէն, խուժանէն աւելի ստոր նամիտ և ի տգեղ անարժան է իր կոչման։

* * *

Թէ երկրին ներկայ քաղաքականութիւնը, թէ Աղգին իրական բարիքն ու արդի վիճակն և թէ Նաո–Պէյը ճանչցող ամեն հարազատ հայ կ՝խոստովանի թէ, Պէշիկթաչի Քարոզիչը չկրնար Պատրիարք լինիլ։

Նախ՝ քաղաքական ժողովը պայն երբ հինգ ընտրելեաց ցանկէն դուրս նետեց, ըսել է անոր Պատրիարք լիննելու հանգամանք չունենալն հաստատեց, ուստի կրկին պայն Աղգ. ժողովոյն ձէջ իբրև պատրիարքական ընտրելի մնացնելու ո և է ցոյց կամ

ջանք բացել ի թաց փաստաթուղթեր դէմ պատերազմ հրատա-
րակել է, որոյ ազէտալի հետեւանքն ըմբռնելու համար ոչ է կամ
անուորբեր լինելը՝ թէ Հայ և Թուրքիոյ լինելը չհասկընալուս
համար ապուշ մը լինիլ է։ Կրնայ Աբէլեանի և Մաթէոսի Նատ-պէյա-
պաշտ վարչապետը՝ Սվաճեան էֆէնտի, Քաղաքական ժողովոյ
մէջ իսկ տրիբունօրէն բացագանչել թէ՝ քաղաքականութիւնը
մեր ազգային ներքին գործոց չկրնար խառնուիլ, որպէս կ'պրուս-
ցեան։ Սակայն ինքն և իրեն համախոհք, որոց մէջ դիւանագէտ-
ներ ալ կան կ'ըսեն, թէ անել համբուս մէջ պիտի նետեն Ազգն՝
եթէ յարատեւեն այդ պիտի անհեթեթ կարծեաց մէջ։ Արդ՝ Քա-
ղաքական ժողովը գնաս-պէյ իր ընտրելեաց ցանկէն դուրս մղ-
ելով յոյժ լսելեաց և յոյժ փափկութեամբ խնայուց թէ Նատ-
պէյի պարարքութիւնը մեղսակից է Ազգին և բացարձակա-
պէս անհաճոյ է Տէրութեան։ Արդ՝ քանի որ Նատ-պէյ իր ան-
ձին նկատմամբ գործած այս պարզ ու մեկին քաղաքականու-
թիւնը չհասկնար, ինքնին կ'ապացուցանէ թէ տարրական քա-
ղաքագիտութենէ զուրկ է, և աւելի իր անձին փառատրու-
թեան, իր իշխանական փչացնելոյս նոր միայլ և վնասելոյ առ-
լու հոգն ունի քան թէ Ազգին օգտին։

* * *

Եւ մինչ Նատ-պէյ ազգային ծանրագոյն տարաստանու-
թեանց տակ չէ՞, Մինչ մնալը ժամանակին և այժմ ընտանե-
կան շրջաններու մէջ չէն յիշատակուած և այժմ թերնէ թերան
չեն պատմեր ազգային շահուց դէմ գործուած Նատալեանց չա-
հատակութիւններ։ Մինչ անհնար էր կամ սիկոփանական խըն-
դոյն մէջ խազացած դերն և ուսս իշխանութեան Ազգընտրվ
դէմ մի քանի հայ եպիսկոպոսաց կողմէ ուղղուած զրպարտութիւն
իրրև հեգինակ համբաւուին, լուր, զոր իրրև ոգբալի նոյն ինք
արդի Տեղապահ Արբազանը հաղորդած էր Զմիւռնիա Մելքի-
սեդեկ Արբազանին նամակաւ մը, զոր կերպով մը յայտնած ենք
անձամբ կարդալ։ Մինչ մոռցուեցաւ այն լուրն որ գեռ երկկ
թերնէ թերան կ'ընկնէր, թէ Գրիգորիս ծերունազարդ եպիսկո-
պոս, իր մահուան անկողնոյն մէջ, կ'անիծէր այն օրն երբ տկա-
րամտութեամբ համոզուելով իշխանազունին, կ'գիմէր միասին
օտար պատօնատուն մը զրպարտիչն յանձնելու։ Մինչ չու-
տով մոռցուեցաւն այն գաւերն որոց նպատակն էր նախ Ներսէս
Վարժապետեանի պատրիարքութիւնը ջնջել, և վերջէն կանի

առպալել. . . այն օրն՝ երբ ես, տակաւին ուսանող, Հայրիկի պատրիարքական ընտրութեան ներկայ դանուելու ուրախութեամբ, գացի Մայր եկեղեցի և տեսայ Մեծանուն Օտեան էֆէնտին՝ որ Ազգային ժողովին մէջ՝ ձեռքն ունենալով հեռագրի պատճէն մը, ըսր Նաւ–Պէյ իր և մի քանի եպիսկոպոսաց և վարդապետաց ստորագրութեամբն յղած էր գաղտ էջմիածին, և Օտեան զայն ձեռք ձգեր էր, ըսյրսիր ձեշտով մը պոռաց — Դաւ և խարդաւանք խորչն Նաւ–Պէյի: Նոյն ժողովին մէջ հեռագիրն ստորագրող կրօնականներէն մին, Կապուտիկեան, ցատկելով ամբոխն՝ գոչեց — Մեղայ, ներեցէք, էֆէնտիներ, խորչն եպիսկոպոս դրեց և մեզ համոզեց ստորագրել, թէև դրուածն որ ֆրանսերէն էր չէինք իմանար: Օտեանի այս առթիւ ըրած ատենաբանութիւնն՝ որ այդ դաւերը կ'նշաւակէր, կ'ակսի այս խօսքով. — Ջարմանալի ժամանակներու մէջ կ'ապրինք: — Հետաքրքիրը կրնան ընթեռնուլ Ազգային ժողովոյ Ատենագրութեանց մէջ այդ նշանաւոր կոիւլեանը: Մեր իշխանազունին ծր մէկ հրապարակային արարքը նշանակենք: Իսկ իր ընկերային կենցաղին վրայ, որ չատ ոչնչութիւն է, քոզ կ'ձգենք, թէև չատեր գիտեն և իրարու կ'պատմեն:

Եթէ Նաւ–Պէյ ինքզինքն ու Ազգը, ինչպէս և Տէրութիւնը՝ որու մէջ կ'ապրի, ճանչէր, պիտի դգուշանար անշուշտ, թող թէ իրեն ատեան մը ներկայանալէ և յարձակմամբ կամ յանկարծակի պատրիարքական դահուն տիրելու անվայել փորձեր ընելէ, այլ մինչև անգամ իր երեսը ցոյց տալէ, որպէս զի չվտանգէ իր հանգիստն և վայելած իմաստութեան սուտ համբաւն, որու գեռ չատ մխիթներ կամ չարամիտներ կ'հաւատան, որպէս զի անախորժ կացութեան մը մէջ չէնէ նաև իր մէկ քանի բարեկամներ դիւանագէտ ջերմ պաշտպաններն Տէրութեան առջև, որ սակայն քաջ կ'ճանչէ իշխանազունին անձուկներն, ինչպէս նաև Ազգին ընդհանուր տրամադրութիւններն որ դէմ են այդ ինքնակործան ատեանին:

Կ. Պոլիս, 10 Օգոստոս 1333: ՕԶԻՆ

ԿՈՎԿԱՍԻՆ ՆԱՄԱԿ

Որքան ուզում են մի որոշ կարգի հրապարակախօսներ թէ այդ տեղ և թէ այս տեղ չանալ արդարացնել ապստամբական խնդրում իրենց ամենատարբ դաւաճանական վարմունքն և գործած մատնութիւնները, որքան աշխատին «ծանր հանգամանքների» պատրուակաւ պատճառաբանել Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցու դարաւոր իրաւունքներն ոտնակոխ տալով Ցարընտրի կամայականութիւնը, բայց և այնպէս մեր ազգային իրաւունքների բռնարարութիւնը դարերով սրբազործած օրէնքների ոտնհար լինելը կ'մնայ մեր պատմութեան մէջ ամենաանբասիր գործերից մինը. մանաւանդ կ'մնայ Հայ ազգի սրտի մէջ, որի իրաւարանչիռ յիշատակը դատնապէս պիտի խօսէ մեզ. . . : Դուցէ երբէք մեր ամբողջ պատմական կեանքի մէջ, այնքան անմիջական մասնակցութիւն չէ ունեցել Հայ ժողովուրդն իր Ազգապետների ընտրութեան համար, ինչպէս որ վերջին ընտրութիւնների միջոցին, որ բացառիկ է թէ իր պարագաներով և թէ իր հետևանքներով: Նա հենց այդ իսկ է պատճառը, որ Հայ ազգը, գոնէ գանձ Ռուսահայը երբէք չհոգանալ իրեն հասած անպատուութիւնը և երբէք չմոռանալ իր դաւաճաններին. . . : Մակարը հաստատուեց, Մակարը բազմեց Էջմիածնի Աթոռը. . . Ազգը չընկճուած էր իրեն համար գործի այդ անսպասելի հետևանքից, խորհրդաւոր լռութիւն պահպանեց և ժամանակ առ ժամանակ արտայայտուած անբաւականութեան և բողոքի ձայները ռուսական սուինների չափիւնով և մատնիչ ու դաւաճանների ազգային գովասանական գորգատոյներով խափանուեցան. . . . : Ազգը երկին խորհրդաւոր լռութիւն պահպանեց, դատաստանարդարութեան թողուվ: Արդէն անցեալ տարի Էջմիածին, վեհարանի վրայ Հայ ժողովրդի գործած յարձակումն և վեհարանի ապստիների կատարուելն անշուշտ կ'իջնեն ընթերցողդ. . . : Բայց ամեն ինչ լռեցրին, կարծելով, թէ երեխայական ցոյց է. . . սակայն գրան յաջորդեց և այս սարսուռ ցոյցը, որ աւելի զգալի է և կարող է լաւ դաս լինել դաւաճաններին և մատնիչներին: Բանը նորանում է, որ մի ինչ որ խորհրդաւոր

կարծիքներ վաղուց չքնում էին հասարակության մէջ, խօսում էին մի ինչ որ գաղտնի պատրաստութիւնների մասին, վաղուց սպասվում էին մեր պատմութեան մէջ չտեսնուած դէպքեր, և ահա, այսօր արդէն, այդ չլուկներն իրականում են ... Այսօր նամակ ստացայ էջմիածնից. ընդհանուր խօսակցութեան առարկան Բիւրակի մէջ դէպն է։ Պէտք է գիտենալ, որ Բիւրականը կաթողիկոսական ամարանոց է, և Մակարը իւր կաթողիկոս լինելն ապացուցանելու համար, ուզեւորել է կաթողիկոսական ամարանոց, ուր բնակարանը կատուցած է Արագած լեռան լանջում։ Ահա այդ ամարանոցն են իրենց գործառնութիւնների համար ստորագիր ընտրել մի խումբ չարաչարներ, որոց նպատակն է եղել Մակարին ուղարկել «ի դոգն Աբրահամու»։ Անցեալ օրեր «չարաչարներն» սկսում են իրենց առաջին գործը նրանով, որ Կաթողիկոսը իւր սենեակում եղած միջոցին հրացանի դնդակներ են թափում նրա վրայ։ Բայց դնդակը վրիպում է իւր նպատակից և կպչում է գաւազանակիր Սահակ վարդապետի թևին, ծանր վէրք պատճառելով նրան։ Այս դէպքը սարսափելի չփոթութիւն և իրարանցում է պատճառում Ռուսընարի մօտիկ անձերին և անմիջապէս դիմում են ... ում, անշուշտ յայտնի է։ Երևանի նահանգապետին, ռուսական սուիններով օգնութեան, և ահա, անմիջապէս Բիւրականին թափվում են ժանդարմներ, ոստիկաններ, քննիչներ, պրօկուրօրներ (դատախազ) և այլ պաշտօնական անձեր, որոնց բոլոր ճիգը պիտի թափուի «չարագործների» կալանաւորելու համար։ Ահ այժմ այգեան, որովհետև մանրամասնութիւնները յայտնի չեն տակաւին։

Պէտք է կրկնեմ, որ Ռուսաստանը երբէք չէ մտնալու և մտնալու էլ բան չէ իր կենսական իրաւունքների բանաբարումը է դէպ թէ անդէպ անիծում է իւր այդ օտարոտի կաթողիկոսին։ Դրան ապացոյց են և այն երգերը, որոնք յորինուած են ժողովրդի մէջ, երգվում են ամեն տեղ։ Այդ երգերից մի քանիսն ընկաւ ձեռքս։ Որպէս նմուշ ահա այդ երգերից մինից մի տուն՝—

Ռուսաց Թէսաւրի նէշան կընէր (աստիճանը, ուսապիր)
Էջմիածնայ վանքի տէր (սիւն)
Աթոռի տաքին (պատճառ եղաւ, Մակարի) տէր
Տէր իմ Աստուած աշխարհ ազատ։

Այդ երգի մէջ նկարագրուած է և այն, թէ ինչպէս Մակարին

ընտրում են, տաճարի ձարերը վառում, ոսկի դրեր ցրում, ընչաքներ չատանում են ասյլն։

* * *

Անչուշտ մանրամասն տեղեկութիւններին չէք սպասում Նա-սիսյից Պ. Գիրսի դէմ ի էջմիածին արած ուղևորութեան պատճառների և հետևանքի մասին։ Այդ մասին, ճշմարիտ է, այս տեղի մամուլին չեն թոյլատում ոչ մի բան գրել, հաղորդել, բայց իսկապես մեզ ևս ոչ մի յայտնի չէ — ամեն մի պահվում է ամենախորհրդաւոր պաշտպանութեամբ, որ չատերին խիստ կասկածների մէջ է ձգում։ Պ. Գիրսը, եկել է կայսեր հրամանով։ Բանից այսքան է երևում, որ տեղիս վարչութիւնների ի նկատի ունենալով, թէ մի քանի հանդամանքների մէջ և մի դիտակ ինչպիսի պայմաններով է ընտրել Մակարը Կաթողիկոս, ըստ կասում են նրա հետ վարուել ամենատանուտաբեր կերպով, այնպէս կարծես թէ Մակարը նրանց ծառան լինէր։ Այդ բանն, որքան որ Մակարն անտարբեր լինէր, չէր կարող տանելի լինել նրան մի քանի չինովնիկներին, որոնց խորհրդով էլ խնամում էր Մակարը «յանձնեցաւ է ընդ դիմանալ Լանովսկու (Կովկասի Ռասումչինսկիի հողագործու) և իշխան Դոնաուկով-Կորսակովի պահանջներին։ Յարաբերութիւնները լարուում են վերին աստիճանի — և այս պատճառ է Գիրսը գործը քննելու համար . . . Թէ ինչ են խոսում, ինչ չեն խոսում — ոչ մի յայտնի չէ, միայն լսենք էրը մնում է առ կախ մինչև սեպտեմբեր, երբ ուսական կառավարութիւնը վերջնական պատասխան պիտի է տայ։ ուրիշ խոսքով գործերը մնում են անորոշ մինչև որ Վեհ. Կայսրը գայ Կովկաս և վերադառնայ Ռուսիա։ Անչուշտ հասկանում եք, որ այդ բոլորը բաղ է, որ խաղում են վախենալով, որ մի գուցէ Մակարը դանգատուի Վեհ. Կայսրին, բան մ'որ ամենևին ցանկալի չէ կառավարիչների համար . . . Այս բոլոր գործի բացատրութիւնը։ Արդէն յայտնի է, որ իշխան Դոնաուկով-Կորսակովը, մինիստր Տոլստոյ, Պոբեդոնոսցեվ և ուրիշներն այն կարծիքից են, որ Կաթողիկոսի հետ կարելի է հրամայելով խօսել միայն . . . Մակարականը իրենց համար զէնք են չինել վերջին հանդամանքները և հաղար ու մի բացատրութիւններով ապացուցում ամեն տեղ, ջանալով Մակարի վարկը դէպի դրանով բարձրացնել . . . Մինչև իսկ շատերը կարծում են, որ այս բոլոր խաղերն էլ հէնց մի միայն Մակարի վարկը բարձրացնելու նպա-

տակ ունին։ Պ. Գիւրը էջմիածնում մնում է յունիսի 27-ից մի-
նչև յուլիսի ժամը 7-ից վերջ մինչև մյուս օրը առաւօտեան ժամը 11-ը։
Էջմիածնում երկու անգամ տեսակցում է Կաթողիկոսի հետ՝
այցելելով նրան. երրորդ անգամը Մակարն է այցելում նրան։
Սկզբում տարածեցին, թէ Գիւրը և Մակարը չատ դէմ են մնա-
ցել մի ևանցից, բայց այժմ պարզվում է, որ ոչ մի խնդիր չէ
ծագում, ինչպէս վերում ասացի. միայն առաջարկվում է կազ-
մել ծրագիր, Մակարի պահանջների յայտագիր եայլն։ Գիւրը
ուղևորում է Գէորգեան Ճեմարանը և, տասնեակից, զոհ է մը-
նում։ Միայն այսքանս յայտնի է տեսակցութեան հետևանքից,
որ Օրմանեանն՝ որպէս պետական յանձնաժոր (?) հեռացվում է
Թուրքիայից, և հեռացվում է Երևանի թեմի Տեղապահութե-
նից և Պարզեան Սուքիաս եպիսկոպոսը, կազմվում է Ճեմարա-
նի համար վերջնական ծրագիր։ Ասում են, որ Մակարն ասել
է, թէ Ռուս կառավարութիւնը խոստացել է նրա աղեղցու-
թիւնը ղրկացնել Թուրքիայում, իսկ այժմ հակառակն է գոր-
ծում։ Պ. Գիւրը պատասխանում է, թէ կառավարութեան նը-
պատակն էլ հէնց այդ է այժմ։ Կան մի քանի մանրամասնու-
թիւններ էլ, բայց դրանց մասին առ այժմ կարևոր եմ համա-
րում լռել, ուրիշ անգամ դրելու առաջարկութեամբ։

Գևր. Օրմանեանը Ալէքսանդրօպոլի վրայն, խոհեմութեամբ
Թիֆ խից խոյս տալով, ուղևորել է Կ. Պոլիս։ Նրան ուղեկցել
է և Պ. Մինաս Ձերազ, որ իրեն թէ ուղարկուած է եղել մի
խումբ երեսփոխանների կողմից՝ մեր դրութեան հետ ծանօթա-
նալու նպատակով։ Անշուշտ հետաքրքիր է թանձ իմանալ թէ ինչ
է տեսել և ինչ դաշտերը է կարդացել մակարականների շրջա-
նում. . . ։

* * *

Ճեմարանում այս տարի ուսուցչների մի քանի փոփոխու-
թիւններ են եղած։ Օրմանեան Արշակեանի և Ս. Տէր Գաբրիէլ-
եանի (Գէորգեան Ճեմարանի նախկին սաներից, աւարտած և
Գերմանիայում աստուածաբանութիւն ուսած մի երիտասարդ)
փոխարէն հրաւիրուած է Կ. Պոլսից Պ. Թորոս Զուպայեին, որ,
ինչպէս կարծվում է, կոնսակրօնութիւն պիտի ընդունի։ Պ.
Մ. Աղնաւուրեանի (Գէորգեան Ճեմարանի աւարտականներից՝ ձայ-
նագրութեան ուսուցիչ և վերակացու) փոխարէն հրաւիրուած
է դպիր Մակար Եփռաքեանցը, որ առաջ տարուց աւելի է Պե-
տերբուրգի կենսրվազրեան կր յաճախում, այս տարի աւար-

տալ է առաջին մրցանակով՝ Պ. Փ. Վ՛արպանեանի վիպասրվին, որ Թիֆլիսի Յովհաննեան օրիորդական ուսումնարանի առնու է նշանակուած, հրաւիրուած է Մէլիք-Ազահէքրեան ուսս գրականութեան, ուս պատմութեան և ուս տիեզերագրութեան համար։ Հրաւիրուած են նաև Յովհաննէս Յովհաննէսեան ուս լեզուի և ընդհանուր գրականութեան պատմութեան համար. իսկ Գասպարեան՝ չափաբերական առարկաների համար։ Բոլոր հրաւիրուածներն էլ նորաւարաններ են. Գէորգեան Ճեմարանի համար առաջարկվում էր փորձուած և բաւական յայտնի Աբէսողոմ Յովհաննիսեանն, բայց Մակարը չէ հաճել նրան հաստատել։ Զիսեամ ինչ առաջադիմութիւն են ապատում այն տեղ, ուր ամեն տարի փոխվում են ուսուցիչները և հրաւիրվում են միշտ նորաւարաններ՝ թողած փորձուած ոյժերը։ Այս էլ առաջադիմութիւն է երևի։

— Յուլիսի 16ի երեկոյեան՝ Գ. Ճեմարանում կրկին հրդեհ է պատահել. ննջարանի արևելեան կողմում եղած չորեքշաբթի աննկից։ Վնասը հասնում է 6300 րուբլու։

— Հայ նորակոչ զինուորներն այս տեղ են. չատ քնդունակ մարդիկ են, բայց կերակրվում, պահպանվում են վատ։ Նրանց զինուորական չորերը տճիւ բաներ են։

31 յուլիս 1888 ՀՐԱՉ

Վանայ թագաւոր վայոց Ցակոբեանին անակնկալ և վշտալի մահն ի խոր սուգ համակեց քաղքիս Հայ հասարակութիւնն, և խմբագրութիւնս սիրոյ պարտաւորութիւն մ՛ունի կատարել իր յաչորդ թերթին մէջ յատուկ յօդուածով մը։

ԲԱԴԱՐԱՆ

Ներոպական մեծ տէրութեանց զինեալ խառնազնեան հրահանգը դրութիւնը հետզհետէ կ՛դառնայ արհաւրալից դրութիւն։ Քաղաքական ու և է աննշան խնդիր, դիւանագիտի մը դէպ ի հիւսիս կամ հարաւ չուն, վիհատեսական տեսակցութիւն մը, նա-

խաղաղական բանակցութիւնն մը, նաւատորմի մ՚այս կամ այն ծովուն մէջ արշաւն, զէպքեր՝ որ սովորական պարագայից մէջ կընային անառիթ անցնիլ, այժմ կ՚հաշտուին, կ՚մեկնաւին եւրոպական մամլոյն մէջ իրենց մեծագոյն պատերազմի գուժարեր նշաններ, այնպէս որ հասարակաց կարծիքը կ՚պղտորուն, ժողովրդոց տնտեսական եւ առեւտրական հաշիւներն, ի միւսոյ հանդրային չահուց, կ՚խանգարուն, ան ու դոլով կ՚պաշարուն միտքերն, մինչդեռ չատեր արդէն կ՚կարծեն ի հետաստանալ թնդանօթի որոտումներն: Եւ ինչո՞ւ. վասն զի անհատ սովորութիւնեալ բանականք՝ ձակատ առ ձակատ կեցած, անշուշտ պաշտօն մը, նպատակ մը պիտի ունենան, կ՚ըսեն, և այդ նպատակն է, նշանի մը վրայ, պերճար փոքր գարձնել: Եւ ըստ որում զիւանագիտական չարժուձեր, պաշտօնական յիշատակներ և տեղեկութիւններ անպակաս են, չրջաբերաբար կ՚կրկնուին մի և նոյն երկիւղն ու արհաւիրք: Այս տեսիս Գերմանիոյ կայսեր՝ Վիլհելմ Ա.ի բացման տեղիս տրուած վերոյհիշեալ ճառն՝ Ադանա–Մերսինի և Ալէքսանդրէթ–Հալէպի երկաթգծով՝ թէ Ասիա միլիոն գերմանք լաւ ևս ունին ինալ պատերազմի պատրաստ վրայ քան թէ իրենց չահածէն քար մ՚անգամ ևս տալ, — խօսք մը զոր տարբեր պարագայից մէջ լսած էր երբեմն և Ֆաւր աւ Գերմանացիս, թէև չէր կատարուած — , Մարաշալ Մոլդքէի հրաժարումն և բազմաթիւ հին զօրականներու նորեր յաջորդելն, Պ. Քրիսբիի և Պ. Ֆլոքէի Մատակի նկատմամբ մեղադ պաշտօնական կծու բանակռիւն, առաջինն Պիսմարդ իշխանին հետ ունեցած տեսակցութիւնն ի Ֆրիսբիխրուհ, անգլիական նաւատորմին Մեծն Բրիտանիոյ ջրերն րրած պատերազմի վարձերն, որ իր նաւային կազմակերպութեան մէջ զգալի թերութիւններ յերեան բերին, Ֆրանսական նաւատորմին նոյնպիսի վարձերն ի Թուլօն և իտալեան նաւատորմիներու արևելեան ծովերու մէջ ըրած չրջաններն, բաւական էին պատերազմի կասկածներ, զի սանդ իտալական յարաբերութեանց ձգտումներ և զրկի միջազգային պատերազմ դրգռել, յատկանիք՝ որ միւս կողմէ ի պաշտօնէ արձակուած խաղաղասիրական յայտարարութեանց չնորհիւ կ՚դադրին, յաջորդ տարի թերևս նմանօրինակ զի պայ տեղիս նորոգուելու համար, մինչև որ այս տարտամ և անստոյգ վիճակն վերջնական լուծումի մը գանէ, և այս լուծումն ալեսի տան բանակներն գանի որ կանգուն մնալու տրիշ պատճառ մը չեն կրնար ունենալ: